



29(567)
10.10.2019

Չրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՐԱՐԱՐ

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՆՈՐԻՅ ՈՒ ԿՐԿԻՆ ՄԵԾԱՐԵՆԸ ՈՒՍՈՒՅՉԻՆ

Ո՛վ է ուսուցիչը: Չարքը քիչ-հինչ տարօրինակ է հնչում, որովհետև մատաղ սերնդին կրթող ու դաստիարակող մասնագետին կարելի է և արժեք ամենալավ որակումները տալ, ընդ որում՝ մեծատառով նշելով Ուսուցիչ բառը: Եվ եթե փորձենք համրագունարել ժողովրդի կողմից մանկավարժին տրվող բնութագրումները, դժվար թե կարողանանք սպառնիչ գնահատականը գտնել: Դա զարմանալի չէ, որովհետև յուրաքանչյուրիս մեջ մշտապես է ուսուցչի կերպարը: Մեր ապրած ու ապրվող կյանքում շատ բան ենք մոռանում, սակայն առաջին ուսուցչի բարի դեմքը, պահանջկոտ-հնչեղ ձայնը, ինչու չէ, նաև կոկիկ տեսքը ուղեկցում են մեզ ամբողջ կյանքում՝ իբրև անփոփոխելի ներկայություն:

Մենք թերևս առաջինության այլ չափանիշներ չունենք, քան ուսուցիչն է: Չինովիկի ենք կամ գիտնական, արհեստավոր ենք կամ արվեստագետ՝ մեր մեջ ուսուցչի անուրանալի վաստակի հյուլեն կա: Չզգանք էլ՝ դարձյալ կա, քանզի մեր իսկական կայացումը դպրոցում է եղել՝ հետագայում պարզապես զարգացրել ենք մեր աստվածատուր շնորհքն ու շնորհները:

Իսկ ինչքանով ենք մեզ պարտավորված զգում նրանց հանդեպ: Մենք, այո, ուսումնասուցիչ ազգ ենք, և դա դարերից է գալիս: Անգամ Արցախյան պատերազմից հետո, ժամանակավոր հրադադարի պայմաններում, երբ երկրում սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ կային, նորաստեղծ ԼՂՀ-ն առանձնացրել է կրթությունը որպես ռազմավարական կարևոր ոլորտ: Երկրում կառուցվել են ու կառուցվում են նոր դպրոցաշենքեր, վերանորոգվում են հինքը, պարբերաբար վերազինվում է ուսումնական բազան, միջոցներ են ձեռնարկվում մանկավարժների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ... Բավարար է այդ ամենը, որպեսզի ուսուցչի վաստակը լիարժեք գնահատված համարել. եթե ելնենք ծապրական հայտնի բանաձևից, ըստ որի դպրոցական ուսուցչին պիտի տալ նախարարի չափ աշխատավարձ, պատգամավորի չափ կարգավիճակ և կայսրի չափ պաշտամունք, ապա հազիվ թե մեր մանկավարժները գոհացած լինեն: Բայց մենք պարտավոր ենք իրատես լինել ու արժևորել այդ ուղղությամբ իրականացվող կայուն քայլերը: Անշուշտ, պիտի հասնել նրան, որ մեր ուսուցիչներն իրոք կայսր զգան իրենց առաքելությունն իրականացնելիս: Դա ժամանակի հարց է, իսկ մինչ այդ եկեք մեր ջերմ վերաբերմունքով, հարգանքի խոնարհումով մեծարենք կրթության անխնայ մշակներին: Դպրոցը և խրատն է, որտեղ «հերթապահող» ամեն ուսուցիչ յուրօրինակ սպա է՝ լի հայրենիքի, ժողովրդի, մատաղ սերնդի հանդեպ անսպառ սիրով ու նվիրվածությամբ:

Շնորհավոր տոնը, Ուսուցիչ:
«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՅՉԻ ՕՐԿԱ ԱՌԹԻԿ



Սիրելի՛ ուսուցիչներ
Արցախի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անուղից ի սրտե շնորհավորում ենք ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:
Դուք իրականացնում եք կարևոր ու պատասխանատու առաքելություն՝ ուղղված մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը եւ վայելում եք մեր ժողովրդի հարգանքն ու սերը:
Դպրոցական երկար ու ծիգ տարիների ընթացքում դուք գտնվում եք ձեր աշակերտների կողքին, սովորեցնում եք ոչ միայն գրել ու կարդալ, այլև տարբերել ճիշտն ու սխալը, գիտելիքների

հետ միասին տալիս եք կյանքի անմոռաց դասեր, որոնք ուղեկցում են նրանց հետագա բոլոր տարիների ընթացքում:
Թանկագին ուսուցիչներ
Մենք միշտ հիշում ենք ձեզ, ձեր բարի խորհուրդներն ու խրատները, ձեր հոգատար ու սրտացավ վերաբերմունքը, ձեր մեծ հոգու ջերմությունը, որ շաղկերտ տվել եք մեզ՝ ձեր անթիվ ու անհամար սաներին: Հիշում ու երախտապարտ ենք ձեզ: Եղեք միշտ առողջ, ուրախ ու երջանիկ: Եվ թող գիտության անդաստանում ձեր ցանած սերմերը ծլարձակեն եւ առատ բերք տան՝ ի նպաստ մեր հայրենիքի զարգացման ու զորացման:
Մեկ անգամ եւս շնորհավորում ենք ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ եւ մաղթում խաղաղություն, քաջառողջություն, հաջողություններ ու ամենայն բարիք ձեզ եւ ձեր բոլոր հարազատներին ու մերձավորներին:

ԱՆ ԿԳՍ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԼՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՅՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻԿ



Ուսուցչի օրը տոն է բոլորի համար: Մի պարզ պատճառով. աշխարհում չկա մարդ, որ ուսուցիչ չունենա: Եվ հոկտեմբերի 5-ը յուրաքանչյուրի համար առիթ է վերհուշի, խոստովանության և խոնարհումի: Այս օրը յուրաքանչյուրը հիշում է իր ուսուցիչներին, հատկապես այն մեկին, ով ամենաշատն է ազդեցություն ունեցել իր՝ որպես անհատի ձևավորման և կյանքի ճանապարհի ընտրության հարցում:
Սիրելի ուսուցիչներ
Բոլոր ժամանակաշրջաններում մարդկային էվոլյուցիային և գիտատեխնիկական զարգացմանը զուգընթաց եղել են մասնագիտություններ, որ վերացել են, փոխարինվել այլ մասնագիտություններով: Ուսուցչի մասնագիտությունն աշխարհի արարման օրից կա ու կլինի միշտ, քանզի դեռ կա մարդկությունը: Որովհետև մարդկային էակը միշտ

սովորելու կարիք ունի: Հենց սրանով է կարևորվում ուսուցչի առաքելությունը: Բոլոր ժամանակներում էլ ուսուցչի դերակատարությունը նույնն է՝ տալ գիտելիքներ, դաստիարակել, զարգացնել հմտություններ ու կարողություններ: Պետք է, սակայն, հասկանալ, թե կոնկրետ ժամանակաշրջանում և ապագային միտված որ գիտելիքներն են կարևոր, և ինչպիսի հմտություններ ու կարողություններ է անհրաժեշտ զարգացնել: Իսկ դա նշանակում է, որ ուսուցիչն ինքը պիտի փոխվի ժամանակի պահանջներին ու մարտահրավերներին համահունչ և մշտապես լինի ոչ միայն սովորեցնողի, այլև սովորողի դերում: Հենց դրանով է լավ ուսուցիչ լինելու դժվարությունը: Ուսուցչությունն աշխատանք չէ, որը կատարում են պարզապես աշխատավարձի համար: Ուսուցչությունն առաքելություն է, որը նվիրում է պահանջում: Եվ հենց դրա համար է ասվում, որ ուսուցիչը մասնագիտություն չէ, կոչում է:
Արցախի աշխարհում բոլոր սերունդներն իրենց երազանքների ու նպատակների իրագործման հարցում միշտ էլ ապավինել են դպրոցին, ուսուցչին: Եվ այն, որ մենք դարձրել ենք շարունակ դիմակայել ենք փորձություններին, ասպատակիչների դեմ պայքարելով ու պատերազմներում հաղթելով հասնել ենք ազատ ու անկախ հայկական պետության ստեղծելուն և զարգացնելու հանգրվանին, վկայում է, որ բոլոր ժամանակներում էլ մենք ունեցել ենք լավ ուսուցիչներ, ովքեր դաստիարակել են խելացի, հայրենասեր, խիզախ ու տաղանդավոր սերունդներ: Որպեսզի այս երթն անխախտ մնա, և գալիք բոլոր հայ սերունդներն էլ արժանանան ան-

կախ ու հզոր Հայրենիքի զավակները լինելու պատվին, կարևոր անելիքներ ունենք բոլորս:
Ուսուցիչը նորից պիտի դառնա ամենահեղինակավոր մարդը մեր հասարակության մեջ, որին պիտի ձգտեն հասնել լավագույնները: Իսկ դրա համար պիտի կարողանանք նորից գրավիչ դարձնել ուսուցչի մասնագիտությունը՝ ոչ միայն նրա սոցիալական վիճակը բարելավելով, այլև մանկավարժական կրթության մեջ անհրաժեշտ բարեփոխումներ կատարելով: Դրան հասնել հեշտ չէ, մասնավոր՝ չկարգավորված հակամարտության և չճանաչվածության պայմաններում: Բայց, կյանքն է վկայում, սահմանափակումները միայն ստիպում են ավելի ուժեղ և հնարամիտ դառնալ: Մենք գտնելու ենք լուծումներ: Եվ ոչինչ չի շեղելու մեզ մեր ընտրած ճանապարհից: Ամեն տարի Արցախում նոր դպրոցներ են կառուցվում, հիմնանորոգվում են, կախավորվում, նոր կրթական հնարավորություններ են ստեղծվում: Մենք սովորել ենք հաղթահարել քաղաքական ու տնտեսական խոչընդոտները: Այսուհետև ևս հաղթահարելու ենք:
Շնորհավորում ենք ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ: Գլուխ են խոնարհում ձեր առջև: Եվ խնդրում են. միշտ ձեր բարձունքի վրա մնացեք: Ձեր փորձն ու գիտելիքները փոխանցեք սկսնակ ուսուցիչներին նույն ծնողական հոգատարությամբ, ինչպես որ վերաբերվում եք ձեր աշակերտներին: Ձեզ և ի դեմս ձեզ՝ Արցախի և մայր Հայաստանի ու Սփյուռքի մեր դպրոցներում դասավանդող բոլոր ուսուցիչներին մաղթում ենք առողջություն, անսպառ եռանդ, բարություն և անսահման սեր ու ջերմություն:

ՏՈՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՅՉԻ ՕՐԿԱՆ

Ուսուցչի օրվա առթիվ հոկտեմբերի 5-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում ԱՅ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից կազմակերպվեց տոնական միջոցառում: Ներկա էին ԱՅ նախագահ Բակո Սահակյանը, պետական այրեր, հանրապետության բոլոր շրջաններից գործող և վաստակած հանգստի անցած մանկավարժներ: Մասնագիտական տոնի կապակցությամբ հանրապետության մանկավարժներին շնորհավորական ուղերձ է հղել Արցախի Հանրապետության նախագահը, որը նաև իր նստավայրում ընդունել է ոլորտի մի խումբ երախտավորների և նրանց հանձնել պետական բարձր պարգևներ: Բ.Սահակյանը առանձին հանդիպումով շնորհավորել է արժեքավոր նվերներ է հանձնել «Դասավանդիչ, Հայաստան» ծրագրով Արցախում աշխատող ուսուցիչներին: Այս ուսումնականում այդ ծրագրով աշխատում են Արցախ գործուղված 30 երիտասարդ ուսուցիչներ, որից 21-ը Քաշաթաղի շրջանի դպրոցներում՝ լրացնելով ուսուցչի թափուր տեղերը: Տոնի կապակցությամբ ոլորտի կա-



Հանդիսավոր միջոցառմանը, ի դեմս նրա մասնակիցների, Ն. Աղաբալյանը շնորհավորել է Արցախի, Հայաստանի և Սփյուռքի ուսուցիչներին: ԿԳՍ նախարարն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց վաստակած հանգստի անցած մանկավարժներին: Այս ուսումնականում Արցախի դպրոցները համալրվել են ավելի քան 50 նոր ուսուցիչներով, որոնցից շուրջ 20-ը առաջին անգամ է դասարան մտել: Նախարարության շնորհակա-

լագրեր և դրամական պարգևներ հանձնվեցին 2018-2019 ուսումնական տարում դպրոցին հրաժեշտ տված վաստակաշատ ուսուցիչներին: Վերջիններս էլ իրենց գրավոր պատգամը հանձնեցին սկսնակներին: Ուսուցչի օրը առիթ է, որ յուրաքանչյուրը հիշի իր ուսուցիչներին ու իր սրտի խոսքն ուղղի նրանց: Միջոցառմանը եղան նաև շնորհավորական տեսաուղերձեր: ԱՅ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը, Արցախի հերոս, «Ոսկի արծիվ» շքանշանակիր ժամանա Գալստյանը, պատգամավոր Արմեն Սարգսյանը, ժողովրդական արտիստ Գևորգ Մուրադյանը, «Արցախի ծայրեր» նախագծի ղեկավար Լիդա Քոչարյանը իրենց երախտագիտությունը հայտնեցին սիրած ուսուցիչներին և շնորհավորեցին բոլոր մանկավարժներին: Առանց հուզմունքի և հպարտության հնարավոր չէր լսել դիրքապահ գինվորների տեսաուղերձը, որոնք, շնորհավորելով հանդերձ իրենց ուսուցիչներին, վստահեցրին, որ նրանց կատարած դաստիարակչական աշխատանքի և տված խորհուրդների շնորհիվ իրենք անա-

ռիկ են պահում մեր հայրենիքի սահմանները: Բեմից հանրապետության ուսուցիչներին շնորհավորանքի խոսք ասացին Քարվաճառի միջնակարգ դպրոցի աշակերտները: Տոնական միջոցառմանը եղան նաև երաժշտական շնորհավորանքներ Ստեփանակերտի ՄՊՍԿ, պարավետսի քոլեջի սաների, Փոքրիկ Ղաբաբաչու: Միշտ, ԱՅ ԿԳՍ տեսուչ Վազգեն Առաքելյանի կողմից: Իսկ Տոնի արվեստի դպրոցի պարաֆանի կատարումը դահլիճում վարակեց նաև «Դասավանդիչ, Հայաստան»-ի ուսուցիչներին: Երեկոյին հնչեց հայ երաժշտության ամենամեծ ուսուցիչ Կոմիտաս վարդապետի պատգամը. «Գթությամբ ու երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին... դաստիարակելու կոչված եք սերունդ մըն, որ ապագա ազգն է... Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը»: Ի պատիվ երաժշտապետի ծննդյան 150-ամյակի՝ «Ասպետ» համույթի երգիչ Նարեկ Վարդապետյանը հոյակապ կատարեց նրա «Գարուն ա» երգը: Ջերմ, գեղեցիկ, ոգևորիչ երեկոյից մասնակիցները հեռացան վարդերով, բարձր տրամադրությամբ:

Ս. ԽԱԶՍՏՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵ

ԽՈՍՔ ԱՌ ՌԻՍՈՒՅԻՉ

Ուսուցչի օրվան նվիրված երեկոյի տեսաուղերձից



Ժամնա ԳԱԼՍՏՅԱՆ Արցախի հերոս, «Ոսկի արծիվ» շքանշանակիր

Սիրելի ուսուցիչներ շատ են ունեցել: Ինձ վրա ազդեցություն են թողել նույնիսկ զուգահեռ դասարանների ուսուցիչները, որոնք ինձ չեն դասավանդել: Բայց ինձ թվում է՝ մեր բոլորի մեջ մնում է առաջին ուսուցիչը: Ի՞նչ ծնողները շատ վաղ են հեռացել կյանքից, նրանց չեն տեսել, ամենաառաջին մայ-

րական քնքշանքը, բուրմունքը, բարությունը են ստացել եմ իմ առաջին ուսուցչուհուց: Ընտանեկան հանգամանքների բերումով նա շուտ հեռացավ մեզանից. տեղափոխվեց ուրիշ քաղաք: Ու դա եղավ իմ մանկական առաջին ողբերգությունը, որովհետև ես երեք ամիս լալիս էի, կարոտում էի իմ առաջին ուսուցչուհուն, որը գրաճանաչ է դարձրել, որը ինձ ցույց է տվել, որ կյանքն ունի շատ գեղեցիկ երանգներ: Ու հետաքրքիր է, որ տասնյակ տարիներ են անցել, բայց այդ բուրմունքը, հոտը, որ ինձ սովորեցնում էր գրել, հացի հոտի պես, հողի հոտի պես, իմ նորածին առաջնեկի հոտի պես մնացել է իմ կյանքում: Ես փոքր ժամանակ ինքնամիտի երեխա էի, չեմ արտահայտել իմ զգացմունքները: Չորս տարի հետո եկավ իմ նոր ուսուցչուհին՝ մաթեմատիկայի ուսուցչուհին, որն իմ առաջին ուսուցչուհու քույրն էր՝ Ռամելա Սերգեյան: Ու ես իմ առաջին ուսուցչուհու կարոտն առնում էի նրանից: Այդ մասին առաջին անգամ եմ խոստովանում:

- Սիրելի Ռամելա Սերգեյան, շնորհավորում եմ Ձեզ Ուսուցչի օրվա առթիվ: Դուք հսկայական դեր եք կատարել իմ կյանքում, ես ոչ մի անգամ չեմ արտահայտվել: Ձեզ՝ երկար տարիների կյանք, առողջություն և իմ խորին խոնարհումը: Եթե ինչ-որ մի աշխարհամասուն ուսուցիչ լինելը մասնագիտություն է, Արցախում այն առաքելություն ու ծառայություն է: Այն, ինչ արել են մեր ուսուցիչները իմ սերնդի, ինձնից հետո եկած սերունդների համար, մասնավորապես տերապիայի տարիներին նկուղներում երեխաներ կրթելով, ինձ թվում է՝ աշխարհում ոչ մի ուսուցիչ չի արել: Դրա համար իմ ակնածանքն եմ հայտնում բոլոր ուսուցիչներին, նրանց հղում ամենալավ մաղթանքներ, ու որ միշտ լինեն ուժեղ, սոկուն, անշահախնդիր՝ ինչպես միշտ են եղել ու շարունակեն իրենց առաքելությունը՝ դաստիարակել սերունդ, որը կարողանալու է պահել-պահպանել մեր Արցախը:



«...Ուսուցչի ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է, նրա ցանած սերմերի մեջ: Ուսուցիչները, ինչպես գիտության տեղական լուսատուներ, պետք է իրենց մասնագիտության գծով կանգնած լինեն արդի գիտելիքների լիակատար բարձրության վրա»:

Գնիտիկ Մեդեյան

ՊԱՏՊԱՍ

Երիտասարդ գործընկեր Ի խորոց արտի և մեծագույն սիրով շնորհավորում եմ քո մուտքը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության բարդ ու դժվարին աշխարհ: Այո, այն ինչքան բարդ ու դժվարին է, այնքան էլ պատվաբեր է ու հայրենամոլ: Դու ընտրել ես ժամանակի ամենապատասխանատու ու ամենապահանջված մասնագիտությունը՝ մանկավարժի մասնագիտությունը: Ուրեմն եղիր ամխոցելի քո բարոյական նկարագրով, վարվեցողության կուլտուրայով, մանկավարժական տակտով ու գաղափարական համոզվածությամբ, ամենացորդ նվիրվիր քո գործին, սովորելով սովորեցրու և ջանասիրությամբ առաջնորդիր սաներիդ դեպի գեղեցիկ աշխարհ:

Բարի երթ դեպի մեծ նվիրում ու ամենօրյա քրտնաջան, ստեղծագործ աշխատանք պահանջող մանկավարժության համակարգ, քեզ ուժ ու եռանդ՝ պատվով կրելու հայ ուսուցչի ուսերին ծանրացած ազգապահպան խաչը:

05.10.2019թ.

Չարգանքով՝ քո ավագ գործընկեր, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Կառլեն ՍԱՐԳՍՅԱՆ

Մեր ժամանակի հերոսը

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԻՄ ՏԱՐԵՐՔՆ Է»



Արթուր ԲԱՐՍՅԱՆ - Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Արթուր Բարսյանի հետ մեր առաջին ծանոթությունը տեղի է ունեցել վերջին տարիներս՝ Ստեփանակերտի Մուրազյանի անվան քաղաքային գրադարանում կազմակերպված մի գրական միջոցառման ժամանակ, որտեղ ասմունքով հանդես են եկել նրա սաները: Հանդիսականներիս վրա մեծ տպավորություն թողեց հատկապես նրա ելույթը, որի ընթացքում նա հայ գրողի ստեղծագործության առնչությամբ զուգահեռներ անցկացրեց ռուս և համաշխարհային գրականության հետ՝ ինքն էլ ասմունքներով նրանց ստեղծագործություններից: Գրականության գիտակներին հիացրին նրա խոր իմացությունը, լայնախոս վերլուծությունը: Յերեկույթի հայտնությունը ոչ թե նա էր, ում նվիրված էր, այլ հայոց լեզվի և գրականության ուսուցիչը, որի մասին, շատերս խոստովանեցինք, տեղյակ չէինք: Նախրա Թամարայանի նման ուսուցչուհին, որը, ինչպես ասում են, լող է տալիս հայ գրականության օվկիանում, խոստովանեց, որ իրեն խեղճացած զգաց նրա կողքին: «Երազով պետք է ման գալ նման ուսուցիչներին», - ասաց:

Առիթներ էլի եղան խորագիտակ այս ուսուցչին առնչվելու՝ սքանչանալու հայ գրական գոհարների նրա մատուցմամբ ու մեկնությամբ:

Ուսուցչի օրվա կապակցությամբ որոշեցինք նրա մտորումները ներկայացնել մանկավարժական հանրությանը: Բայց մինչ այդ՝ կենսագրական մի քանի տեղեկություններ:

Ավարտել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցը: Մի որոշ ժամանակով տեղափոխվել է Երևան և 8-րդ դասարանը սովորել հ.110 դպրոցում: «Ինձ վրա մեծ տպավորություն է թողել 8-րդ դասարանը: Այդտեղ հաճախակի էին այցելում դերասաններ, ելույթ ունենում: Վարդուհի Վարդերեսյանը Ռուբեն Սևակի «Ինչո՞ւ» բանաստեղծությունը որ արտասանել է, փշաքաղվել եմ: Այդ օրվանից դարձել եմ արևմտահայ պոեզիայի սիրահար: Մինչ այդ մենք գիտեինք Սեծարենց, Դուրյան: Ի՞նչ բախտը չի բերել, որ Արամ Մարտիրոսյանը չի ինձ դասավանդել: Բայց ինձ ամենից քննություն ինքն է ընդունել: Ես դասից փախչում էի, գնում իրեն լսում, թերթում կարդում էի նրա հոդվածները: Նրա կերպարը ինձ միշտ ուղեկցել է», - հիշում է ուսուցիչը:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1982թ. Սարգսյանի դպրոցում: Վեց տարի գյուղում աշխատելուց հետո տեղափոխվել է Ստեփանակերտ, դասավանդել բատերակյան ստուդիայում: Որոշ ժամանակ աշխատել է կուլտուրայի մարզային վարչությունում: «Ղարմետաքսկոմբինատի հերթափոխային դպրոցում միայն կանայք էին աշխատում, տղամարդ ուսուցչի կարիք են զգացել, ինձ հրավիրել են աշխատելու: Լավ երեխաներ կային, պատկերացրեք, ավելի լավ, քան հանրակրթական դպրոցում», - վերհիշում է նա: Դա եղել է 1989-1990 թվականներին: Մեկ տարի աշխատելուց հետո սովխոզտեխնիկումի տնօրեն Ա. Ջիվանշիրյանի հրավերով աշխատանքի է անցել այդտեղ: Բայց զուգահեռ բատերակյան ստուդիայում միշտ աշխատել է: 2010 թվականից աշխատում է Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցում:

- Հանգամանքների բերումով, իմ կամքին հակառակ ընտանիքով (երեք մանկահասակ երեխաների հետ) որոշ ժամանակ ապրել եմ Ռուսաստանում: Միշտ երազում էի վերադառնալ հայրենիք: 2007թ. վերադարձա այն հույսով, որ կաշխատեմ իմ սիրած մասնագիտությամբ: Բայց ինձ վիճակված էր իրականացնել այս մարդկային ցանկությունը միայն 2010թ.: Ամենուրեք ինձ ասում էին, թե տեղ չկա, հարկավոր է սպասել: Ինձ ասում էին՝ մենք աշխատանքի ընդունում ենք տեղաբնակներին, ոչ թե եկվորներին: Ես դարձել էի 43жойи cредн cвоих: Երեք տարի նստել սպասել եմ: Ուրիշ մեկը իմ տեղը եկած ճանապարհով վերադարձած կլինեք: Բայց ես ճակատս դեմ եմ տվել: Նախ՝ իմ հարուստ գրադարանը, որ մնացել էր: Երազմ Ռոտերդամցին մի լավ խոսք ունի, ասում է՝ որտեղ իմ գրադարանն է, այնտեղ իմ հայրենիքն է: Իմ կյանքում վակուում էր ստեղծվել, բիզնեսից հոգնել էի, հայոց լեզուն, գրականությունը, ընդհանրապես մանկավարժությունը ինձ միշտ ձգել է: Մանկավարժությունն ինձ համար կոչում է, ամենացորդ նվիրում սիրած մասնագիտությանը: Ուսուցչի աշխատանքը ամենօրյա տոբնաջան, միևնույն ժամանակ հաճելի գործ է: Ուսուցիչը չպետք է բավարարված զգա ծեռք բերած գիտելիքներով: Դա ինձ համար արքիմա է. եթե մի օր գիրք չընթերցեմ, ինձ շատ վատ կզգամ: Հասարակության մեջ կա այսպիսի կարծրա-

տիպ, որ մանկավարժությունը կանացի մասնագիտություն է: Ես համաձայն չեմ: Նույնիսկ ինձ ասել են, որ ուսուցիչ լինելը տղամարդու բան չէ, համոզում էին հրաժարվել: Ժամանակին հորս էլ են ասել՝ Սեդրակ, դա տղամարդու բան չէ, որ դու անում ես: Հայրս կանացի վարսավոր էր և Ստեփանակերտում առաջինը իր տեսակի մեջ և, ի դեպ, քաղաքի ամենալավ վարսավորը: Իմ մասնագիտության ընտրության հարցում կարևոր դեր են խաղացել ինձ տղամարդ ուսուցիչները: Այսօր էլ երախտագիտությամբ եմ հիշում իմ ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Արտյոմ Խաչատուրովիչին, որն ինձ համար սուրբ մարդ էր: Շատ մեծ ազդեցություն է ինձ վրա թողել: Այնպես է արել, որ վատ ծեռագիրս էլ է փոխվել, լավացել: Թելադրությունից «3»-ից հասել եմ «5»-ի: Ես երախտապարտ եմ հայ գրականության հիանալի մասնագետ Շահեն Մարտիրոսյանին: Նա է ինձ խորացրել ընթերցանության մեջ: Առանց այն էլ ինձ մտածել է եղել գրքի հանդեպ սերը, որը մեր ընտանիքից էր գալիս: Ասում էր՝ մինչև Խորենացու «Հայոց պատմությունը» չկարդաս, Բյուզանդ, Նարեկացի, Քուչակ, ինձ մտ չգաս: Հիմա ես շատ եմ զարմանում, որ ուսուցիչ կա, որ ասում է՝ «Վարդանանքը» դու որ երկու անգամ ես ընթերցել, ես որ մի անգամ էլ չեմ կարդացել, կարո՞ղ է քեզից պակաս ուսուցիչ եմ: Չեմ մոռանում Սամվել Դուկասյանին, որն ինստիտուտում

մեր պրակտիկայի ղեկավարն էր: Արամ Մարտիրոսյանին, որը թեպետ ինձ չի դասավանդել, բայց նրա կերպարն ինձ միշտ ուղեկցել է: Խորհրդային կարգերը կնոցը բերեցին դպրոց: Դրանից առաջ կին ուսուցիչ չկար: Պատմությունից չեմ հիշում, որ ցարական կարգերի ժամանակ կին աշխատե՞ր դպրոցում: Մեր կրթական օջախներում՝ Լազարյան ճեմարանից մինչև Գևորգյան ճեմարան, Աստրախսանի դպրոց, կին ուսուցիչ չի եղել: Հիմա տեղերը փոխվել են: Հեռավորորային կարգերը տղամարդուն դուրս մղեցին դպրոցից: Ցավով ու ավստանքով պիտի նշեմ, որ որոշ ուսուցիչների համար մանկավարժությունը դարձել է բիզնես, նրանք մոռացել են ուսուցչի սրբազան կոչումը: Շտեմարանով գրականություն են սովորեցնում, հետո էլ զարմանում, թե աշակերտն ինչու է հեռացել գրքից: Աշակերտը չի հեռացել գրքից, աշակերտին հեռացրել են: Ինքը՝ ուսուցիչն է հեռացրել: Շտեմարանով մի՞թե կարելի է գրականություն սովորեցնել: Աշակերտը ստիպված սերտում է՝ առանց բնագիրը կարդալու: Նրանց կյանքի լավագույն տարիներն անցնում են առանց գրականություն կարդալու: Ստիպված են հիշեցնել, որ գիտելիքի աղբյուրը գիրքն է, բնագիրը, ոչ թե շտեմարանը: Շտեմարանը աշակերտը սերտելով՝ նրան ժամանակ չի մնում, ասում է՝ հետո կկարդամ: Իրեն թվում է, թե հետո ժամանակ է ունենալու: Երբեմն ինձ որոշ ուսուցիչներ հակաճառում են, թե

համակարգն է այդպիսին: Ուրեմն համակարգն է, մենք էլ նրա հիւր կամակատարներ ենք, այո՞: Դրա համար էլ աշակերտը բառապաշար չունի, մեր գրական լեզվին չի տիրապետում: Մոլորություն է, որ միայն հայոց լեզվի և գրականության ուսուցիչները պետք է դպրոցում խոսեն գրական հայերենով: Դա գրականության ուսուցիչ մենաշնորհը չէ, ոչ էլ պարտականությունը: Բոլոր ուսուցիչները պետք է խոսեն, էլ չեն ասում, որ ուսուցիչ կա, որ երեխաների հետ շփվում է ռուսախառն, օտար բառերով: Համակարգը ոչ մի առնչություն չունի, կամ եթե համակարգն էլ է, եթե քո հոգում կա գրքի, գեղարվեստի համոզել պիտի ու ձգտում, պետք է այն բոլոր միջոցներով սերտեցես աշակերտին: Այլապես ոգու սովը նաև այստեղից է սկսվում:

Տասներորդ տարին է, որ աշխատում եմ ավագ դպրոցում: Բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպել մեր դասական գրողներին նվիրված: Իհարկե, դա չեն անում ինձ ցուցադրելու համար, ինչպես ոմանք կարծում են: Աշակերտը գրքից հեռացել է, գոնե այդ ճանապարհով ուզում են մոտեցնել նրան: Երեխաները սիրով ու խանդավառությամբ են մասնակցում: Նույնիսկ ընդգրկում են թույլ սովորող աշակերտին: Երբ նա ասում է, թե այդ երեք տարվա ընթացքում իր հիշողության մեջ բան չի մնացել, բայց միջոցառմանը իրեն համեմատարկված Համո Սահյանի, Չարենցի կամ մեր մյուս դասականների բանաստեղծությունը հիշելու է, երբեք չի մոռանա, դա ինձ ոգևորում է: Դա էլ միջոց է գրքից հեռացած աշակերտին մոտեցնելու մեր գրականությանը, մշակույթին: Ախր աշակերտը պետք է մեր մշակույթը լավ իմանա: Անկախ նրանից, թե նա ինչ մասնագիտություն է ընտրելու, իր պատմությունը լավ պետք է իմանա: Եթե մեկը հարցնի, թե ինչով է ապացուցում, որ Ղարաբաղն իր հայրենիքն է, պիտի պատմություն իմանա, որ փաստեր բերի: Ավ. Իսահակյանն ասում է՝ հայրենիքը ոչ միայն քար, հող, լեռ է, այլ նախ և առաջ լեզուն է, ոգին: Ոգու կրթողը գրականությունն է, պոեզիան: Մեր առարկան հենց ինքը հայրենասիրությունն է:

Ասում են՝ ավագ դպրոցում ուսուցիչը պետք է քիչ խոսի: Բայց որ աշակերտը չի ընթերցում, ես եմ ստիպված լինում խոսել, որ գոնե մի բան իմանա: Ինձ ավելի շատ հիասթափեցնում է անտարբերությունը գրողների հանդեպ: «Սասնա ծռեր»-ից հարցեր կան քննության ժամանակ, ասում են՝ մի անգամ չե՞ս ուզում ընթերցել, տեսնես ինչի մասին է: Մեկ օրն էլ հերիք է ընթերցելու համար: «Աշնան արևը» կես օրում կարելի է կարդալ: Կամ Մահարու «Ծաղկած փշալարերը»: Անընդհատ դա են ասում, որ շատ զբաղված են: Բայց երբ 10-րդ դասարանցին է նույնը ասում, զարմանում ես: Ասում է՝ զուցե գրականության ժամերն էլ լեզու պարպանք, քննության ժամանակ գրականության հարցերը քիչ են:

ՎԱՍՏԱԿԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԸ ԶԻ ՇՂԱՐՇԵԼ ՆՐԱ ՎԱՌ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Ուղիղ մեկ տարի առաջ էր, որ հնա- պատի միջնակարգ դպրոցի 1967-1968 ուստարվա շրջա- նավարտների՝ դպ- րոցն ավարտելու 50-ամյակի կապակ- ցությամբ հանդիպ- ան ժամանակ ար- ված առաջարկու- թյունը՝ դպրոցի մա- թեմատիկայի կաթի- նետներից մեկը ան- վանակոչել կրթո- ջախի կայացման գործում զգալի ավանդ ներդ- րած, նախկին տնօրեն (1961-1980), մաթեմատի- կայի բացառիկ մասնագետ, մեծ երախտավոր Գայա Բաբայանի անունով:

Մենք (տողերիս հեղինակը այդ շրջանավարտ- ներից մեկն է) հավատարիմ մնացինք մեր խոստ- նանքը՝ կահավորել կաթինետ, օժանդակել սովորողների կրթությանն ու դաստիարակությանը, հա- վերժացնել վաստակաշատ մանկավարժի անունը ու ծեռնամուխ եղանք ծրագրի իրա- գործման աշխատանքներին:

Հոկտեմբերի 5-ը՝ Ուսուցչի մի- ջազգային տոն օրը, հենց ընտրվեց կաթինետի բացման հանդիսավոր արարողությունը կազմակերպելու համար, որին ներկա էին Գայա Բա- բայանի հարազատները. որդին՝ Ար- կադի Հայրապետյանը, որն այսօր Երևանի տնտեսագիտական համալ- սարանի բարձրագույն մաթեմատի- կայի ամբիոնի ղոցնետ է, դուստրը՝ Ալիսան (մաթեմատիկայի ուսուցչու- հի), թոռներն ու ծոռները, հրավիր- վածներ՝ ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մի- քայել Համբարձումյանը, Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը, Աժ պատգամա- վոր Ալյոշա Գաբրիելյանը, նախկին սաներն ու գոր- ծընկերները:

Բացման խոսքով հանդես է գալիս դպրոցի տնօ- րեն Լյուդմիլա Մոսիյանը, և ժապավենը կտրելու պատիվը տրվում է ավագ և կրտսեր Արկադիներին (Գ.Բաբայանի որդին ու ծոռը): Կաթինետի կահա- վորումը տպավորում է ներկաներին: Անցյալի քաղցր հուշերը համակում են բոլորին: Նկարնե- րում Գայա Բաբայանի վառ կերպարն է, որ կար- ծես գրույցի է բռնվել միջոցառման մասնակիցների հետ: Այնուհետև նրանք ծանոթանում են օրվա հե- րոսի կյանքին ու գործունեությանը:

Քիչ են այն մարդիկ, որոնք թողած հետագիծը տարիների հեռավոր ընդգծվում է որպես լուսավոր մի փարոս, որի շառլ շողերը, խավարը ցրելով, լու- սավորում են սերունդների ճանապարհն ու նրանց հասցնում նվիրական երազանքների ցանկալի հանգրվաններ:

Բնության մի դաժան օրենքով նման մարդկանց վիճակված չէ երկար վայելել երկրային կյանքը: Ծանր ու դժվարությամբ նրանք ապրում են իմաս- տալից կյանքով ու ասուպի պես հանկարծակի ան- հետանում: Բայց, ի հեծուկս մահի, նրանց ընդ- հատված կյանքը դառնում է հավերժական կյանքի սկիզբ, դառնում պատգամ՝ ուղղված սերունդնե- րին:

Գայա Բաբայանը նման անհատականություն- ներից մեկն էր: Ապրել է զուսպ ու համեստ կյան- քով՝ կշռադատելով բոլոր քայլերը: Երբեք ունևոր- ներին չի նախանձել, զոհացել է իր ունեցածով: Ավելին, հասցրել է որպեսզի բաժին հանել կարիքա- վորներին: Նա ապրել է ավելի շատ ուրիշների, քան իր համար: Մաթեմատիկա առարկան նրա աշ- խարհն էր, օղն ու ջուրը, հանապազօրյա հացը: Այդ առարկայից խուսափող մարդն անզամ, աշակեր- տելով նրան, չէր կարող չհետաքրքրվել անմատչե- լի թվաճոց այդ երևույթով: Գայա Բաբայանը ոչ մի- այն լավագույն մասնագետ էր, առարկայի գիտակ, այլև առաջին հերթին մարդ, որ իր խորաթափան- ցությամբ կարող է սուզվել հոգուդ խորքը, հասկա- նալ քեզ մտահոգող խնդիրները ու կարեցածին չա- փով օգնել, սատարել վիատության պահերին, թևեր պարզել նորանոր թռիչքների համար:

Այսօր, գնահատելով նրա մեծ վաստակը հարա- գատ կրթօջախի կայացման, սերունդներին հա- րուստ գիտելիքներ փոխանցելու ու նրանց ճանա- պարհը լուսավորելու գործում, խոր պատկառան- քով փորձում ենք վերաբժարել նրա մարդկային կերպարը ու այսքան տարի անց ասել, որ նրա վառ անհատականությունը ժամանակը չի շղարշել, ընդհակառակը, ավելի է ընդգծել մեծ մանկավար- ժի լուսավոր կերպարը:

Գայա Բաբայանը ծնվել է 1925թ. հունվարի 15-

ին ԼՂ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում: 1932-1942թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրո- ցում: Շուշիի մանկավարժական երկամյա դասըն- թացն ավարտելով՝ աշխատանքի է անցել Խնա- պատի միջնակարգ դպրոցում: 1944թ. ընդունվել է Բաքվի Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի հեռակա բա- ժինը՝ միաժամանակ աշխատելով դպրոցում որ- պես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1961թ. նշանակվել է գյուղի միջնակարգ դպրո- ցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև իր երկրային կյանքի ավարտը՝ 1980թ. ապրիլ:

1963թ. պարգևատրվել է «Աշխատավորության շրջանում քաղաքական գիտելիքների պրոպա- գանդման համար» պատվոգրով, 1966թ. երկրի բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով, 1970թ.՝ Լենինի 100-ամյակի հոբելյանական մեդա- լով, 1974թ.՝ Ժողովրդական կրթության գերազան- ցիկ կրծքանշանով ու բազմաթիվ այլ պատվոգրե- րով:

1960-ական թվականներին զգալի աշխատանք է ծավալել գյուղում անգրագիտության վերացման ուղղությամբ: Իր անմիջական նախաձեռնությամբ գյուղում բացվել է երեկոյան-հեռակա դպրոց,

հետնորդների կողմից: Ժամանակը կարևոր չէ: Ըն- դամենը երեք ամիս հետո կլրանա երջանկահիշա- տակ Գայա Բաբայանի ծննդյան 95-ամյակը: Այս միջոցառումը խոր հարգանքի ու խոնարհումի տուրք է ոչ միայն նրա, այլև մեր մյուս նահատակ ուսուցիչների հիշատակին:

Միջոցառումը բազմաթվական էր ու մեծ խոր- հուրդ ուներ իր մեջ ամփոփած: Սրտի խոսք ունեին շատ-շատերը: Դրանք ուղղակի հորդում էին նրանց շուրթերից: Մաթեմատիկայի ուսուցչուհի, կաթինե- տի վարիչ, Գայա Բաբայանի նախկին սան Մարի- ետա Մելքունյանի համար մեծ պատիվ է եղել նրան աշակերտելն ու նրա հետքերով քայլելը, քանզի նա իր ուղենիշ աստղն է եղել կյանքում:

Բահատուր Դավթյանի համար Գայա Բաբայա- նը ուղղակի մայր է եղել՝ ընդգծված հոգատարու- թյամբ, բարձր առաքինությամբ ու մեծ սրտով: Նրա հուզումնառատ հուշերը արցունք են քսում հան- դիսատեսների աչքերից: Ու հետևում է նրա խոս- տովանանք-գնահատականը. «Ես շատ-շատ եմ սպասել այս օրվան, այս երանելի պահերին: Շնոր- հակալություն բոլոր նրանց, ովքեր իրականացրել են այս բացառիկ միջոցառումը: Գայա Բաբայանը, իրոք, արժանի էր այսպիսի մեծարման ու գնահա- տականի»:

Գայա Բաբայանի որդին՝ Արկադի Հայ- րապետյանը, բառեր չէր գտնում իր երախ- տագիտությունը հայտնելու. հուզմունքը խեղդում էր նրան: Որպես բարձրագույն մա- թեմատիկայի գիտակ՝ նա իր պատրաստա- կանությունը հայտնեց մեկշաբաթյա մաթե- մատիկայի դասընթացներ կազմակերպել շր- ջանի բարձր դասարանցիների և ուսուցիչնե- րի համար: Այնուհետև շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին:

Աժ պատգամավոր Ալյոշա Գաբրիելյանը, մեծարելով նախկին ուսուցչուհուն, շեշտեց, որ իր կայացման գործում շատ մեծ է եղել նրա ներդրումը:

Դպրոցի նախկին տնօրեն, Գայա Բաբա- յանի գործի անմիջական շարունակող Զա- վեն Բեգլարյանը ասաց, որ իրեն ժառանգած հեղինա- կավոր դպրոցն ու նրա բա- րի ավանդույթները ինքը փորձել է պահպանել, և դա հաջողվել է:

Ասկերանի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Էդիկ Գաբրիելյանն էլ իրեն համարում է այն երջանիկ- ներից մեկը, որ աշակերտել է ընկեր Բաբայանին և ընտ- րել այն ժամանակ Խնապա- տի միջնակարգ դպրոցի լա- վագույն ուսուցիչ Բահա- տուր Դավթյանի մասնագի- տությունը:



ստեղծվել աշակերտական-արտադրական բրի- գադ ոչ միայն կոլտնտեսությանն օգնելու նպատա- կով, այլև սովորողների աշխատանքային դաստի- արակությունն ապահովելու համար:

Գայա Բաբայանի գործունեության տարիներին Խնապատի միջնակարգ դպրոցում բնագիտական առարկաների աստեղային ժամն էր: Ամենուր նրա սաները լուրջ քննություն էին բռնում ու փառաբան- վում իրենց ցուցաբերած կայուն գիտելիքներով՝ բարձր պահելով հարազատ կրթօջախի և ուսու- ցիչների պատիվը: Պատահական չէ, որ նրա ճա- մապարհը բռնեցին ոչ միայն հարազատ զավակ- ները:

Գիտության անեզր ու բազմախորհուրդ աշխար- հում ճախրեցին նրա սաները ու բարձունքներ հանվեցին. Յուրիկ Բաղդասարյան, Սահակ Սա- հակյան, Արեւ Խաչատրյան, Կոլյա Բաբայան, Արմո Օատուրյան, Բարսեղ Բեգլարյան, Անուշավան Աղաջանյան, Գուրգեն Խաչատրյան, Ալեքսանդր Խաչատրյան, Սլավա Սարգսյան ...: Շատերն էլ ընտրեցին սիրած ուսուցչուհու մասնագիտությու- նը և ամենուր բարձր պահեցին նրա անունն ու պա- տիվը:

Մեծ մանկավարժը մասնակցել է ժողովրդական կրթության մարզային բաժնի խորհրդակցություն- ներին ու հանդես եկել մաթեմատիկայի դասա- վանդման մեթոդներին նվիրված զեկուցումներով: Մի խոսքով, նրա պաշտոնավարման օրոք դպրոցի հռչակը դուրս էր եկել մարզի սահմաններից: Այսօր նրա մանկավարժական գործունեության ու մարդ- կային բարձր հատկանիշների մասին խոսելն ու արժևորելն մեծ պատիվ է մեզ համար, քանզի նման մարդկանց գնահատելը պատգամ է՝ ուղղ- ված սերունդներին, մեծ դաս է ու դաստիարակու- թյուն:

Թող բոլոր արժանիները տեղ գրավեն իրենց փառքի պատվանդանին ու գնահատված լինեն

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒ- ԹՅՈՒՆՆ ԻՄ ՏԱՐԵՐՔ Է»

2 Նրանց միայն դա է հե- տաքրքրում, որ քննությու- նը հանձնեն, մեկ էլ գնան համալսա- րանում նստեն, այնտեղ էլ ժամանակ սպանեն: Ասում են՝ այսինքն որ գիրք չի ընթերցել, կարող է՝ պակաս դիրք ունի: Ասում են՝ լավի օրինակը բեր, ինչո՞ւ ես վատը բերում: Այդ մարդը որ առանց կարողալու հասել է այդ դիր- քին, կարո՞ղ է նրան գովում ես, բա- ցասական ես, չէ՞, արտահայտվում:

Ես հաճախ եմ հիշում Եմերտնի խոսքը. «Քաղաքակրթության ճշմա- րիտ ցուցանիշը ոչ հարստությանն ու կրթության մակարդակն է, ոչ քա- ղաքների մեծությունը, ոչ բերքի առատությունը, այլ երկրի դաստիա- րակած մարդու պատկերը»: Դա շատ կարևոր է, որ մենք աչքաթող եմք անում: Երեխայի աշխարհայացքը դպրոցում է ձևավորվում: Իսկ դա ուսուցիչ պահանջում է նվիրվածու- թյուն, ամենօրյա անդուլ աշխա- տանք:

Մեր երիտասարդներին խորհուրդ կտայի ժամանակը ճիշտ օգտագոր- ծել: Շարունակ լսում եմ, որ ծանրա- բեռնված են, ժամանակ չունեն գիրք կարդալու կամ հետո կկարդան: Հե- տաձգում են: Ինձ դա էլ է մտահո- գում, որ ժամանակի արժեքը չեն հասկանում, շատ անփույթ են ժա- մանակի հանդեպ: Ես ինչ հիշում եմ, այդ ժամանակվանից է: Հիսունն անց մարդու համար դժվար է մտապահե- լը: Նույնիսկ եթե ժամանակն գի- տեի, մոռացել եմ, էլի հեշտ վերա- կանգնվում է: Աշակերտները սա չեն հասկանում, ասում են՝ հետո ու հե- տաձգում են, իրենց կյանքի լավա- գույն տարիները շատ անփույթ են անցկացնում:

Երբ աշխատում էի գյուղում, դպրոցի տնօրեն Հրաչիկ Սիմոնյանը դասալսումների վերջում ասում էր, որ ես ծնվել եմ մանկավարժ լինելու համար: Ես այն ժամանակ չէտու էի ջախել հասկանալու համար այդ խոսքերի իմաստը: Ինչ-որ տեղ նույ- նիսկ վիրավորված էի զգում. ինձ թվացել է, թե ես ուրիշ բանի ընդու- նակ չեմ: Տարիներ հետո հայրենի- քից հեռու՝ արտերկրում ես խորա- պես հասկացա, որ դա բարձր գնա- հատական է:

Կյանքս այնպես է դասավորվել, որ երկար դադարից հետո նորից եմ եկել, վերադարձել եմ մանկավար- ժություն: Այն տարիներին ես զգացել եմ, որ ինչ-որ բան պակաս է, դա- տարկություն կար իմ հոգում: Դա գրականության, մանկավարժու- թյան, աշակերտի, մատաղ սերնդի հետ շփման բացակայությունն էր: Կարող է զարմանաք, բիզնեսմեննե- րի հետ սեղանի շուրջը նստած՝ ես թեման շուտ էի տալիս դեպի գրակա- նություն: Ուսուցիչը, գերմանացի- ներն ինձ լսելով ասում էին՝ քո տեղն այստեղ չէ, դու գնա քո հայրենիք, այնտեղ ծառայիր: Անքնություն էի ձեռք բերել: Բժիշկներն ասում էին՝ դու անընդհատ գրույցը շեղում ես դեպի Բլոկ, Եսենին, պատմություն, գրականություն, զմա ծրի աշխատիր կիրակնօրյա դպրոցներում, տես ինչ- պես ես վերականգնվում: Իրոք այդ- պես էր:

Ես չեմ փոշմանում, որ ուսուցիչ եմ: Ֆիզիկապես հոգնում եմ, բայց նաև մեծ բավարարվածություն եմ զգում:

Մանկավարժությունն իմ էու- թյունն է, կյանքի իմաստը: Կրողվ- վում եմ, հոգնում, բայց միևնույն է, իմ տարերքն է:

Ներկայացրեց Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆԸ

Ստորյա ԴԱԶԱՐՅԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՅԱՆՔ՝ ԱՆՄԱՑՈՐԴ ՆԿԻՐՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ



Լրացավ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Խաչատրյանի ծննդյան 70-ամյակը: Գործընկեր, որը Ա.Խաչատրյանի պարագայում կարելի է համարել որպես գիտական-ստեղծագործական հաջողությունների նոր հարթակ, որովհետև մեր ավագ ընկերն ու ուսուցիչը դեռևս լի է երիտասարդական ավյունով: Այնպես որ, երբ որ այդ ավյունով մա առեցրու կլինի դեռ երկար տարիներ: Ծնվել է 1949թ. հոկտեմբերի 6-ին Ասկերանի շրջանի Խնայատ գյուղում: 1967թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը: ԵՊՀ-ն ավարտելուց հետո նրան ուղեգրով աշխատանքի են նշանակել Հայկական ԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում, որտեղ տարբեր պաշտոններում աշխատել է մինչև 2003 թվականը: 1975թ. ավարտել է մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, որից հետո, 1981թ. պաշտպանել է թեկնածուական,

իսկ 2001թ.՝ դոկտորական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2018թ. սեպտեմբերից կրկին աշխատում է մեխանիկայի ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող: Ա. Խաչատրյանը 2003թ. սեպտեմբերից մինչև 2018 թվականն աշխատել է Արցախի պետական համալսարանում: Նախ եղել է ԱրՊՀ գիտական քարտուղարը, իսկ 2010թ. մարտից մինչև 2017-ի հունվար՝ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի վարիչը: Մինչև 2017 ժամանակ դասավանդում էր «Նյութերի դիմադրություն», «Տեսական մեխանիկա», «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» դասընթացները և «Դասական օրթոգոնալ բազմանդամներ» հատուկ դասընթացը: 2005թ. հունվարին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում՝ «Մեխանիկա» մասնագիտությամբ: 2003-ից մինչև 2017 թվականը բազմիցս ընտրվել է ԱրՊՀ գիտական խորհրդի անդամ, Արցախի գիտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ, ֆիզիկամաթեմատիկական և բնագիտության ֆակուլտետների խորհուրդների անդամ: Բացի այդ, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է: 2014թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչում: Նրա ղեկավարությամբ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի


երկու երիտասարդ դասախոսներ պաշտպանել են գիտական թեզ և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ալեքսանդր Խաչատրյանի գիտական գործունեությունը նվիրված է ընդհանուր անիզոտրոպիայով օժտված միաշերտ և շերտավոր հեծանների, սալերի և թաղանթների լարվածադեֆորմացիոն վիճակների ուսումնասիրությանը: Նրա աշխատանքներում ասիմպտոտիկ մեթոդն օգտագործված է ընդհանուր անիզոտրոպիայով օժտված երկշերտ հեծանների, սալերի և թաղանթների հաշվարկման համար՝ շերտերի միջև կոնտակտի լրիվ և ոչ լրիվ պայմանների դեպքում: Ա.Խաչատրյանի կողմից առաջադրված տեսության երկրաչափորեն ոչ գծային հավասարումներից դուրս են բերված երկշերտ հեծանների, սալերի և թաղանթների լարվածադեֆորմացիոն վիճակները նկարագրող միաչափ և երկչափ հավասարումներ, ինչպես նաև ռեկուրենտ բանաձևեր բոլոր լարումների և տեղափոխությունների հաշվման համար: Ստացված գիտական արդյունքները համեմատված են գծային տեսության հայտնի լուծումների հետ: Ա. Խաչատրյանի հետազոտությունների արդյունքներն ընդլայնում են ասիմպտոտիկ մեթոդի կիրառության շրջանակները և հնարավորություն են տալիս լուծելու խնդիրների նոր դաս բազմաշերտ բարակապատ մարմինների համար: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել կոնստրուկտորական բյուրո-

ներում, հիմքերի և հիմնատակերի կառուցման ժամանակ, սեյսմոլոգիայում և այլ բնագավառներում: Նրա հետազոտությունների արդյունքները հրապարակվել են ավելի քան 50 գիտական հոդվածների տեսքով, որոնք տպագրվել են Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում ու միջազգային գիտաժողովների նյութերում: Հեղինակ է երեք ուսումնական ձեռնարկների: Ալեքսանդր Խաչատրյանը պարբերաբար մասնակցել է հետաքրքիր գեկուցումներով հանդես եկել ինչպես ՀՀ-ում և ԼՂՀ-ում, այնպես էլ արտերկրում: Նրա ակտիվ մասնակցությամբ ԱրՊՀ-ում 2008-2018 թթ. տեղի են ունեցել «Դեֆորմացիոն միջավայրերի փոխազդեցության դիմափակայի պրոբլեմները» VI, VII, VIII և IX միջազգային գիտաժողովները: Նա միջազգային դրամաշնորհների հիմնական կատարողներից է՝ SOROS (1994-1995թթ.), INTAS 97-1140 (1999-2001թթ.): Սրտանց շնորհավորում ենք մեր սիրելի ուսուցչին՝ Ալեքսանդր Մովսեսի Խաչատրյանին իր փառահեղ տարեդարձի առթիվ, մաղթում նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Գայանե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ
Նարինե ՍԱՐԳՍՅԱՆ
Ֆիզմաթ գիտությունների թեկնածու

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԸ՝ ԿՈՄԻՏԱՍԻ ՇԵՏ

2009 թվականից Արցախում հոկտեմբերի 7-ը նշվում է որպես Գրադարանավարի օր: Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում տոնական օրն արժևորվեց կոմիտասյան միջոցառումով՝ հատկանշելով հայոց երաժշտապետի հոբելյանը՝ Կոմիտասի 150-ամյակը: Միջոցառումը ներածական խոսքով բացեց գրադարանի տնօրեն Անահիտ Բաղդասարյանը՝ շնորհավորելով գործընկերներին և ներկայություններին Գրադարանավարի մասնագիտական տոնի կապակցությամբ: «Մենք՝ գրադարանավարներս, մեր համեստ և անչափ կարևոր աշխատանքով ընդգծում ենք գրքի ու ընթերցանության կարևորությունը, մեր նպաստը բերում մշակութային ժառանգության պահպանման գործուն», - ասաց նա: Տարին Կոմիտասյան է, գրադարանն էլ միացել է համազգային այդ իրադարձությանը և Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի հետ համատեղ կազմակերպել է գրական-երաժշտական ցերեկոյթ: Այն վարեց գրադարանի աշխատող Անուշ Համբարձումյանը՝ մեջբերելով Համո Սահյանի տողերը՝ նվիրված Կոմիտասին:



*Քո երգերի մեջ գութանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Վիրավոր լոր է, Սոնա յար է,
Թուխ այտի խալ է և ծնկի ծալ...*

ՈՒՍՈՒՅԻՉ՝ ԲԱՐՈՒ, ԼՈՒՅՍԻ ՍԵՐՄՆԱՅԱՆ

Հոկտեմբերի 4-ին Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում կայացավ ուշագրավ միջոցառում՝ նվիրված Ուսուցչի օրվան: Ուսուցիչ, նվիրյալ անձ, որը սերունդներին տանում է գիտության և լուսյի ճանապարհով: Ուսուցիչը բոլոր ժամանակների հասարակության ամենապատասխանատու անդամն է. նրանով են ձևավորում մարդկությունն ու նրա սերունդը: Դաստիարակության ոլորտում ունեցած ուսուցչի անուրանալի ներդրումը աշակերտներին գիտակցականության մղող ամենաուժեղ ազդակներից է: Ուսուցիչը քանդակում է իր սաների հոգեկերտվածքը: Դպրոցն այն միջավայրն է, որտեղ հղկվում և ամրանում է աշակերտի հոգին, գի ուսուցիչը, հմուտ ճարտարապետ լինելով, գիտի յուրաքանչյուր սանի հետ աշխատելու վարվելակերպը՝ նրան մղելով դեպի ազնիվ և վսեմը, քաջն ու իմաստունը, պարզն ու մարդկայինը: Մեծարանքի խոսքերը, որ հնչում էին դահլիճում, սրտաբուխ էին. - Թանկագին ուսուցիչներ, ցանկանում ենք լավն ու բարին: Կյանքի ձեր ճանապարհին ազատ լինեք վշտի ամպից, վարդեր բուրեն միշտ ձեր ճամփին... Մեծարող տողերը համեմվում են ասույթներով. «Ուսուցչի հպարտությունը

աշակերտների մեջ է, նրա ցանած սերունդի աճի մեջ: Դպրոցը վիթխարի ուժ է, որը վճռում է ժողովրդի ճակատագիրը. ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն...»: Ուսուցիչ և ակնածանքի ակնառու դրսևորումներով իրենց խոնարհումն են արտահայտում սաները.

րելագործում՝ վարպետանալով դասընթացներում): Գնահատանքի հավաստումները շարունակվում են. «Քո բարոյն ու ազնիվ աշխատանքի, քո համբերության ու լավատեսության, ուսուցչի աշխատանքին ընծայվելու քո նվիրվածության համար այսօր և ընդմիշտ դու արժանի ես մեծարման, ամենաբարձր ու վսեմ խոսքերի, իմ սրտառու բարեկամ»:

*Իմ ուսուցիչ, իմ արև, ծնողա-սիրտ իմ Աստված,
Քո փայլալից ծաղիկն եմ,
Երագել ես, որ բուրեմ,
Մեսրոպախոս իմ բախտի հավերժախոս այգաբաց,
Թող ծնկի գամ քո առջև ու մատներդ համբուրեմ...*



Ուզում են այսօր Ձեր դեմ խոնարհվել, Իմ լավ ուսուցիչ, իմ մեծ բարեկամ... Հնչում են տարբեր պարեղանակներ՝ կոմիտասյան «Շորորա», ազգագրական «Բուլուլ», «Շավալի», որոնց ներքո սիրով և համապատասխան պատրաստվածությամբ են կատարում հարազատ կրթօջախի սաները (շնորհալի պարուսույց՝ Անուշ Ջաքարյան, որ պարային կատարումները տարեցտարի ավելի է կատար-

լեկտիվն իր տոնը նշեց Գանձասարում՝ աղոթքներով ողողելով Սուրբ վանքի մյուռոնաբույր որմերը: Մեկ օր հետո ուսուցիչներին շնորհավորելու համար դպրոց ներկայացավ շքարհմիության նախագահ Ս. Շամվոնյանը՝ ընծայելով շնորհավորագիր և Ռոբերտ Եսայանի բանաստեղծությունների ժողովածուն:

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

Սեփ. լրատվություն

ԲՆԱՆԽՈՒՅՁ ՆԱՅԱՅԸ

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ...

«Հորը է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն»:

Ավ. Բահակյան

Ուսուցիչ: Ասել է թե՛ բարությունը, ազնվությունը, մեծահոգությունը, արդարամտությունը և բոլոր մյուս առաքինություններն իր մեջ խտացնող ակտիվ կենսադիրքի տեր մարդ-քաղաքացի:

Ուսուցիչ: Այդ ասել է՝ վատահոգությունը, հարգանք, սեր ու հավատամք:

Իսկ եթե այսօր ինձ հարցնեն, թե ով է թո սիրած ուսուցիչը, ես առանց վարանելու առաջինը կնշտեմ մայրենի լեզվի ու գրականության վաստակաշատ ուսուցիչ, ավելի քան ութսուն տարվա պատվարժան կյանքի ճանապարհ անցած, ոչ միայն աշակերտներ, այլև աշակերտների աշակերտներ ունեցած, արդեն երջանկահիշատակ դարձած ընկեր Արսեն Ալեքսանյանի անունը: Ինչո՞ւ: Որովհետև երբ ամեն անգամ վերահիշում եմ իմ դպրոցական տարիները, իմ հայացքի առջև միշտ էլ առաջինը գծագրվում է նրա բարի կերպարը, որին բնությունը օժտել է իսկական ուսուցչին անհրաժեշտ բոլոր բարեմասնություններով:

Եվ եթե տողերիս հեղինակը, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 2001 թվականին՝ շրջանային (Մարտունո) «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում 2-րդ տեղ է գրավել և Մարտունո շրջանի վարչակազմի կրթության բաժնի կողմից արժանացել պատվոգրի, ապա, ինչ խոսք, երախտագետ սիրով պարտական է նաև իր սիրելի ու նվիրյալ ուսուցչին՝ ընկեր Արսեն Ալեքսանյանին:

Բայց հարց է ծագում՝ բոլոր ուսուցիչներն են իրենց կոչման բարձրության վրա: Եվ բոլորն են, արդյոք, արժանանում նման սիրո ու հարգանքի: Իհարկե՞ ոչ: Ինչ խոսք, նախկին աշակերտի աշխատանքային-ուսումնական հաղթանակը համարվում է նաև իր նախկին ուսուցչի հաղթանակը, նրա անմնացորդ նվիրում-արարումն է: Անհամեստություն չհամարեք, տողերիս հեղինակի մի աստղաբույլ սաներ դարձել են հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ: Իսկ երկու դուստրերս՝ Լիլիթը և Մերին, ավարտել են, դարձել դարձյալ մայրենիի՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ: Կրտսերս՝ Մերին, Մ. Մաշտոցի անվան համալսարանի գրականության դասախոս էր աշխատում: Ընտանեկան պայմանների թելադրանքով հիմա ՌԴ քաղաքացի է, ապրում և աշխատում է այնտեղ: Դուստրս՝ Լիլիթը և հավատամք, որ կրկին կվերադառնան և կբնակվեն հարազատ ազատ ու անկախ Արցախի Զանրապետությունում:

Վերահիշում եմ, երբ տարիներ առաջ մեզ մոտ՝ ճարտար եկավ տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, նրա առաջին հարցը՝ ուղղված ինձ, մեր բոլորի կողմից սիրված ու հարգված, դարձել լավագույն ուսուցչուհի ընկեր Արմիկ Պողոսյանի մասին էր, որը նաև եղել է բանաստեղծի ուսուցչուհին: Երբ այդ մասին ես հայտնեցի ընկեր Ա. Պողոսյանին (նա երկար տարիներ ճարտարի միջնակարգ դպրոցի տնօրենն էր), ասաց, որ չի հիշում: Եվ չի էլ կարող ուսուցիչը հիշել բոլոր սաներին, որոնք շատ են: Իսկ երբ հիշում է սանը, այդ արդեն ուսուցչուհու համար պետք է լինի այն մեծ երջանկությունը, որը յուրաքանչյուր ուսուցչի բաղձանքն է: Այ-

վիկ Սիրգոյան (Ասկերան), Նելսոն Դազարյան (Հաղորտի), Սլավիկ Մուսայելյան, Զամելտ Մուսայելյան, Կամո Աբրահամյան (ճարտար), Շահիս Ալեքսանյան (Հերիեր), Բորիկ Բաբայան (Կոլխոզաշեն), Մերուժան Մոսիյան (Մարտունո), Վիգեն Գրիգորյան (Տող), Սերգեյ Մարտիրոսյան (Ստեփանակերտ), Նորայր Դանիելյան (Մարտակերտ), Գեմադի Դավթյանիսյան (Մուշկապատ), Վարդան Ջիվանջիրյան (Ալենադրյուր), Գավրիկ Սիրգոյան (Շեխեր)... Ասք ու հուշապատում դարձած այս ուսուցիչ-քաջորդիների ցուցակը կարելի է շարունակել, որովհետև սովոր եղավ նրանց շարքերը: Բոլորն էլ անմահացան, հերոսացան տարբեր ռազմադատերում՝ հանուն հարազատ եզերքի:

...Ուսուցչի մոտ չպետք է լինի խոսքի ու գործի հակասություն, թե չէ նրա խոսքը համոզիչ չի լինի, երբ խաների կողմից այն չի ընդունվի որպես ճշմարտություն:

Չեթեթական դասի ժամանակ ուսուցիչներին մեկը քարոզում է. «Երեխաներ, հայրենի բնության, մեր այդ կանաչ հարստության պահպանության համար բոլորս պարտավոր ենք համատեղ պայքարել...»:

Եվ ահա չանցած մի քանի օր, երբ նույն դասարանի մի խումբ աշակերտներ իրենց դասղեկի համեմարարությամբ գնում են գյուղամերձ անտառից մասուր քաղելու, զարմանքից քարաճում են՝ անտառի փոքրիկ բացատում հանդիպելով ցանկատու դպրոցի մասնակցին: Միայն, որը ցերեկով, երեխաների աչքի առաջ ուսուցչի ձեռքերով ինչ-որ տեղ խաթարվում էր նաև Աշոտի, Արամի, Սուրբիկի և մյուսների՝ իրենց ուսուցչի հանդեպ ունեցած... հավատը:

Ուսուցչի հաջողությունը նրա սաների հաջողությունների մեջ է: Եթե աշակերտը ապագայում անցնում է նրանից, ուրեմն բախտավոր է նման ուսուցիչը: Ուրեմն՝ նա իսկական ուսուցիչ է: Անհամեստություն չհամարեք, տողերիս հեղինակի մի աստղաբույլ սաներ դարձել են հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ: Իսկ երկու դուստրերս՝ Լիլիթը և Մերին, ավարտել են, դարձել դարձյալ մայրենիի՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ: Կրտսերս՝ Մերին, Մ. Մաշտոցի անվան համալսարանի գրականության դասախոս էր աշխատում: Ընտանեկան պայմանների թելադրանքով հիմա ՌԴ քաղաքացի է, ապրում և աշխատում է այնտեղ: Դուստրս՝ Լիլիթը և հավատամք, որ կրկին կվերադառնան և կբնակվեն հարազատ ազատ ու անկախ Արցախի Զանրապետությունում:

Վերահիշում եմ, երբ տարիներ առաջ մեզ մոտ՝ ճարտար եկավ տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, նրա առաջին հարցը՝ ուղղված ինձ, մեր բոլորի կողմից սիրված ու հարգված, դարձել լավագույն ուսուցչուհի ընկեր Արմիկ Պողոսյանի մասին էր, որը նաև եղել է բանաստեղծի ուսուցչուհին: Երբ այդ մասին ես հայտնեցի ընկեր Ա. Պողոսյանին (նա երկար տարիներ ճարտարի միջնակարգ դպրոցի տնօրենն էր), ասաց, որ չի հիշում: Եվ չի էլ կարող ուսուցիչը հիշել բոլոր սաներին, որոնք շատ են: Իսկ երբ հիշում է սանը, այդ արդեն ուսուցչուհու համար պետք է լինի այն մեծ երջանկությունը, որը յուրաքանչյուր ուսուցչի բաղձանքն է: Այ-

սօր նրա նախկին սանը՝ Ռ.Դավոյանը, ժամանակակից հայ պոեզիայի կարկառուն դեմքերից է, որը տարիներ առաջ երախտագիտությամբ էր արտաբերում սիրելի ուսուցչուհու անունը՝ ասելով. «Ինչպե՞ս է, անպայման կբարեք...» (այդ օրերին ուսուցչուհին գյուղում չէր):

Իսկ մի՞թե սա միևնույն ժամանակ պարտքի, ուսուցչուհու հանդեպ ունեցած մեծ պարտքի դրսևորման յուրահատուկ ձևերից մեկը չէ:

Կամ տարիներ շարունակ ճարտարի հանրահայտ ու փառաբանված կոլտնտեսության արտադրության տարբեր ոլորտներում առջևից քայլող շատ երիտասարդ մասնագետներ սիրով, հպարտությամբ և ակնածանքի ջերմ զգացմունքներով մշտապես ասում էին. «Մենք ընկեր Շահեն Քամայանի նախկին սաներն ենք»: Ի դեպ, Շ. Քամայանը նույնպես Արցախի 20-րդ դարի լավագույն ուսուցիչներից մեկն է, որի անունը թևածում էր նախկին Խորհրդային Միության ամբողջ տարածքում: Նրա սաները մրցության են մեկնել և հաղթող ճանաչվել նույնիսկ համամիութենական մրցույթներում, համաժողովներում:

Շարունակենք մեր խորհրդածությունները:

Ուսուցիչը, ամենօրյա ինքնակրթությամբ անընդհատ հարստացնելով իր մտքի շտեմարանը, պետք է միևնույն ժամանակ ունենա իր ստեղծագործական ինքնուրույնությունը, իր պրպտող միտքը: Պետք է ամեն օր սովորի, որ կարողանա սովորեցնել, խորհի-մտածի, որ կարողանա սովորեցնել, խորհի-մտածել տա: Թե չէ կան ուսուցիչներ, որ դասարանում աշակերտներից պահանջում են ինքնուրույն «սեփական բառերով» շարադրել իրենց մտքերը, մինչդեռ իրենք՝ ուսուցիչները, դասագրքերին գերի դառած, անգիր հաղորդում են դասը:

Ուսուցիչը պետք է ամենօրյա պահանջկոտություն ցուցաբերի ոչ միայն սաների, այլ նաև իր նկատմամբ: Որոշ ուսուցիչներ այն սխալ տեսակետն ու կարծիքն ունեն (այդ ավելի շատ նկատվում է սկսնակ ու երիտասարդ ուսուցիչների մոտ), թե սիրալիրությամբ, այսպես ասած՝ «ընկերական մտերմությամբ», մեղմության ու նույնիսկ գնահատականների շռայլ վարձատրության ճանապարհով կարելի է տեղ գտնել սովորողների սրտում, արժանանալ սիրո ու համակրանքի: Նման ուսուցիչները սխալվում են, այն էլ՝ չարաչար:

Ես այստեղ կուզեի նրանց հիշեցնել, որ մեծանուն մանկավարժ Ա.Մակարենկոն իր սաներին խստովանում էր, որ նրանց նկատմամբ ունեցած իր պահանջկոտությունը զալիս է նրանց հանդեպ ունեցած խոր սիրուց: Եվ իրոք, ակնավոր մանկավարժ իր բեղմնավոր գործունեության գրավակազմներից մեկն էլ տեսնում էր իր այդ «պահանջկոտ սիրո» գաղափարով առաջնորդվելու մեջ:

Ուսուցիչը միաժամանակ կյանքում պետք է լինի համեստ մարդ: Մի անգամ ես իմ մանկավարժ ընկերներից մեկին հայտնում եմ, որ նրա երեխայի բնավորության մեջ նկատվում են անհամեստության գծեր: Նա ոգեշնչված ասում է. «Այդ իմ սրտի ուզածն է: Զամեստները մեր կյանքում չեն կարող բարձրանալ»:

Ի՞նչ էք կարծում, նման մանկավարժ կարո՞ղ է ինչպես հարկն է՝ թրծել ու կոփել մանկական այդ բյուրավոր գուլալ հոգիները, որոնք

վատահված են նրան: Եվ ինչքան ցավալի է, երբ նման մտածողություն ունի ուսուցիչը: Իհարկե ես չեմ ասում ունենալ գառան հեզություն, սուսիկ-փուսիկություն (որը երբեմն ավելի վտանգավոր է):

Որոշ ուսուցիչների մոտ նկատվելի է քաղքենիության միտումը: Չափել ուսուցչուհին դասարան է մտնում խոշոր ականջօղերով: Ներկած, նախշած աչքն ու ունքը, մատներին փայլող թանկարժեք մատանիները, բարձրակրունկ կոշիկները ամբողջ դասի ընթացքում սովորողների ուշադրության կենտրոնում են:

Չաջորդ օրը նույն ուսուցչուհին դասարան է մտնում իր մոր շրջագետով, մազերի մոր սանրածով, մի խոսքով բոլորովին մոր կերպարանքով, ասես նույն դերասանը մի ուրիշ դեր պիտի խաղա: Եվ դարձյալ սովորողներին չի հուզում, չի հետաքրքրում նրա պատմած, բացատրած դասանյութը: Որովհետև երեխաների ուշքն ու միտքը սկեռված են միայն ուսուցչուհու ապշեցուցիչ տեսքի վրա:

Մեր կյանքում դեռևս տեղ են գտնում բացասական որոշ երևույթներ: Ուսուցիչը պետք է ունենա ազնիվ, անաչառ ու անհաշտ հոգի ու երբեք նման վատ երևույթների կողքով չանցնի լուռ ու անախարեք, ինչպես ասում են՝ երեսը շրջած: Ես այստեղ ուզում եմ մեջբերել գրող-իրապարակախոս Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչ» վիպակի հերոս Մամյանի հետևյալ խոսքը. «Նայում եմ այս երեխաներին ու մտածում. որտեղի՞ց, ասացե՛ք, որտեղի՞ց են ծնվում ստահակները, պաշտոնանուները, անստորագիր նամակ գրողները»:

Չիշում եմ, երբ դեռ աշակերտ էի, մեր մայրենի լեզվի դասագրքում գետնեղված էր մի գողտրիկ ոտանավոր, որը մեր ուսուցչուհու միջոցով մենք հաճախ էինք բեմականացնում: Այդ ոտանավորի մեջ նկարագրված էր, թե ինչպես երեխաներից մեկը հպարտություն է ապրում նրանով, որ իր մայրը բժշկուհի է, մյուսը նույն զգացումն է ապրում իր օրաչու մորով, երրորդը՝ ինժեներ մորով, հաջորդը՝ գյուղատնտես, մյուսը... Իսկ վերջում բոլորի հետ հպարտանում է նաև նա, որի մայրը ուսուցչուհի է: Ինչո՞ւ: Քանի որ նա ուսուցանում ու դաստիարակում է բոլորին՝ բժշկին ու գիտնականին, գրողին ու դերասանին, հանրապետության նախագահին ու վարչապետին, շինարարին ու գյուղատնտեսին, զինվորին, զորավարին ու հացագործ-մեխանիկատորին... Իրոք, ինչքան լավ բան է լինել ուսուցիչ, հոգևոր աշխարհի ճարտարապետ-սերմնացան, ուսուցիչ՝ ձեր ողջ հոգով, սրտով, ձեր ողջ էությունը-գոյությամբ, գործունեությամբ, հոգևոր առողջ հունդերի արարումով: Այնպիսի ուսուցիչ, որին կյանքում ընդօրինակել ցանկանա բոլորը և ամենուր էլ սիրով ու հպարտությամբ արտաբերեն անունը: Իսկ հանդիպելու պահին ասեն. «Չիշո՞ւմ եք, ուսուցիչ, ես Ձեր աշակերտն եմ»:

Եվ նման պահերին, ինչ խոսք, այնպե՛ս կջերմանա, կարևորվի ձեր տրամադրությունը, ձեզ այնպես, այնքան վեհ ու երջանիկ կզգաք, եթե իրոք, դուք ուսուցիչ եք:

Թովիկ ԶԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Բ. Ճարտար
Թոշակառու ուսուցիչ

Շնորհավորանք

Սիրված ՈՒՍՈՒՑՈՒՄԸ



Չիրավի ճիշտ են ասում իմաստունները, թե ուսուցիչ դառնալու համար պետք է անմնացորդ այրվել և անշեջ կրակի նման ջերմացնել ու լուսավորել սաների կյանքի ուղին:

Այսպիսի մանկավարժներից է Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի դասավար Արև Գոլմեսիյանը: Մանկավարժ, որն իր եռանդով, կենսախնդությամբ, հումորով ու սրամտությամբ կախարդել է սաներին:

Նա կարողանում է թափանցել աշակերտի հոգու խորքը, ընկալել մանուկների սրտի նուրբ թրթռները, վերհանել յուրաքանչյուրի հետաքրքրությունները, զարգացնել դրանք և կողմնորոշել դեպի ճիշտ ուղի:

Պարզապես պետք է հպարտանալ, որ նորայն մանկավարժության շարքերն ամուր պատվանդանին պատվով պահող մանկավարժներից է նա, գործընկերների, սաների և ծնողների հարգանքն ու սերը վայելող մանկավարժ:

Լրացավ սիրելի ուսուցիչ 50-ամյակը: Նա ոչ միայն սիրված ուսուցիչ է, այլև հարգված գործընկեր: Կարողանում է սիրած աշխատանքը համատեղել ջերմ ու համերաշխ ընտանիքի մայր լինելու սուրբ պարտականությանը:

Թող Աստված նրան պարգևի մոր ուժ ու եռանդ, առողջություն, խելացկություն, բերկրանք ու խաղաղություն:

Թող ծլարծակեն նրա բոլոր մտահղացումները, ճյուղավորվի ընտանիքի հաստատուն ծառը, թռռնիկների աշխարհ գալով ավելի ու ավելի գեղեցկանա և իմաստավորվի սիրելի ուսուցչի կյանքը:

Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Մեր զավակների առաջին ուսուցչուհի Արև Գոլմեսիյան: Շնորհավոր Ձեր ծնունդը: Թող կրկնապատկվի Ձեր ուժն ու եռանդը, համբերությունն ու նվիրվածությունը, թող քառապատկվեն Ձեր դեմքի փայլն ու հմայիչ ժպիտը, քանզի դա է գրավականը առողջ մտքի և անձնուրաց աշխատանքի:

Թող Ձեր սաները լինեն ջահակիր մայրենի լեզվի, աղն ու լույսը հասարակության, դրոշակակիր՝ հայրենասիրության:

Ուժ ու կորով Ձեզ Ձեր տքնաջան ու բազմաչարչար աշխատանքում:

Խորին հարգանքներով՝ Ստեփանակերտի Ա.Դուլյանի անվան հ.2 դպրոցի IV բ դասարանի ծնողներ

ՎԱՍՏԱԿ

ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ՝ ՈՒՍՈՒՅԻՉ



մամբ արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանի հավանությանը և առաջարկ ստացել սովորելու Երևանի կոնսերվատորիայում, բայց հայրը չի համաձայնվել:

Դպրոցն ավարտելուց հետո ժ.Պետրոսյանը դիմում է Երևանի բժշկական համալսարանի դեղագործական բաժին, սակայն ընդունվել չի հաջողվում:

Ապագա մանկավարժն աշխատանքի է ընդունվում Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես կազմակերպիչ, ընդունվում է Բաբելի պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկայի հեռակա բաժինը, աշխատում արդեն որպես դասվար: 1973թ. ճակատագիրը նրան փորձության առաջ է կանգնեցնում՝ 4 զավակների մայրն անժամանակ կորցնում է ամուսնուն: Հաղթահարելով ծանր ապրումներն ու դժվարությունները՝ նա կարողանում է իր երեխաներին հավուր պատշաճի դաստիարակել, կրթել և հասցնել իրենց նպատակին: Բազմանդամ ընտանիք, կենցաղային հոգսեր, պարտականություններ. այս ամենը չի խանգարել ուսուցչուհուն համատեղել աշխատանքն ու ընտանեկան հոգսերը:

Խորհրդային դպրոցում օրինակելի ու առաջադեմ ուսուցչուհին արժանացել է ավագ ուսուցչի կոչման, մինչև թոշակի անցնելը ղեկավարել տարրական օղակի մեթոդիկությունը: 2007թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: 2008թ. անցել է վաստակած հանգստի:

Մանկավարժական երկար ու ծիգ ուղի անցած դասվարը միշտ աչքի է ընկել աշակերտների նկատմամբ ունեցած ուշադրությամբ, հոգատարությամբ, աշխատանքի հանդեպ պատասխանատվությամբ ու նվիրվա-

ծությամբ:

Մեր հանդիպման ժամանակ խոսելով դասավանդման տարիներին կիրառած մեթոդներից՝ գրուցակից ընդգծեց, որ միշտ առաջնորդվել է իր ուսուցչուհի Սարիկ Հովհաննիսյանի օրինակով: «Իմ ամբողջ գործունեության ընթացքում աշակերտների մեջ սերմանել եմ արդարամտություն, մարդասիրություն և հայրենասիրություն: Առանձնահատուկ սիրել եմ առաջին դասարանցիներին, միշտ ուշադրություն դարձրել նրանց առանձնահատկություններին ու նախասիրություններին, ուսումնական գործընթացում աշակերտներից յուրաքանչյուրին ցուցաբերել անհատական մոտեցում՝ զարգացրել նրանց ունակություններն ու կարողությունները: Քիչ չեն այն երեխաները, որոնք գիտելիքներով չեն փայլում, բայց նրանց մեջ զարգացած է լինում արվեստի որևէ ճյուղի հանդեպ սերը: Ուսուցիչը պետք է դանկատի ու ավելի զարգացնի», - ասում է վաստակաշատ մանկավարժը և համեմատականներ անցկացնում նախկին ու այսօրվա ուսումնական ծրագրերի ու կիրառվող մեթոդների միջև: «Բնական է, որ կան առավելություններ ու բացասական երևույթներ: Ժամանակակից տեխնոլոգիաներին գերազանց տիրապետող աշակերտի մոտ դաստիարակության պակաս է զգացվում դիմացինի, հասարակության, հասարակական գույքի օգտագործման և այլնի հանդեպ: Եթե աշակերտը կատարի հասարակական աշխատանք, ապա նա այլևս չի վնասի և չի փչացնի շրջապատը»:

48 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ժամանա Պետրոսյանն արդեն տասը տարի է, ինչ անցել է վաստակած հանգստի, բայց այն նվիրվածությունը, աշակերտին սովորեցնելու եռանդն ու սերը, որ ունեցել է դպրոցում, շարունակում է ար-

թուն մնալ նրա մեջ: Նա հպարտությամբ է նշում, որ դասավարական հմտություններով ու մեթոդներով կարողացել է օրինակ ծառայել երիտասարդ մասնագետներին, իսկ աշակերտների ու հասարակության կողմից արժանանում է սիրո և հարգանքի: «Իմ սաներից շատերն այսօր տարբեր ոլորտներում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ, շատ-շատերը սահմանից կանգնած ապահովում են մեր խաղաղ հանգիստը: Ցավով ու կսկիծով պիտի նշեմ, որ նրանցից շատերն էլ իրենց կյանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին», - ասում է նա:

Անդրադառնալով ուսուցչի մասնագիտության կարևորությանը, ինչպես նաև խնդիրներին՝ վաստակաշատ մանկավարժը նշեց. «Բոլոր ժամանակներում ուսուցչի մասնագիտությունը եղել է իր բարձրության վրա: Հասարակության յուրաքանչյուր անդամի՝ հասարակ աշխատողից մինչև երկրի ղեկավար, կայացման ճանապարհին իր ուրույն դերն ունի նրա ուսուցիչը: Ուստի կարևոր են համարում նշել, որ պատկան մարմիններն ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, որ ուսուցիչները՝ աշխատողից մինչև թոշակառու, լինեն սոցիալապես ապահով, որպեսզի իրենց համարեն լիովին հարգված ու գնահատված»:

Օրինակելի ու բարեհամբավ մանկավարժի հետքերով են գնում նաև նրա ժառանգները՝ դուստրն ու թոռները:

Առողջություն, երկար տարիների անհոգ, ուրախ, ջերմությամբ ու հոգատարությամբ լեցուն կյանք մաղթենք ընկեր Պետրոսյանին և մեր բոլոր ուսուցիչներին: Թող նրանց բազմամյա փորձն ու խորհուրդներն ուղեմիշ լինեն սերունդների համար:

Անուշ ԱՍԻԻԲԱԲՅԱՆ

Շնորհավորանք Սիրով ՈՒ ԵՎԻՐՈՒՄՈՎ



Հասարակ լինելը ինքնին մեծություն է:

Ոչինչ այնպիսի պարզությամբ աչքի չի ընկնում, ինչպես խոհեմությունն ու հանդուրժողականությունը. լինել հասարակ, հենց նշանակում է լինել մեծ:

Այս պիսի խոսքով էլ ցանկանում ենք սկսել մեր խոսքը մի այնպիսի մարդու մասին, որն իր մանկավարժական գործունեության ողջ ընթացքում անմնացորդ նվիրումով է վերաբերվել իր առջև դրված ցանկացած խնդրի և լավագույն մարդկային հատկանիշներով հասել այնպիսի մեծության, որը կոչվում է Մարդ: Աշակերտական, ուսուցչական, ծնողական, ընկերական կոլեկտիվների սերն ու հարգանքը վայելելու համար անհրաժեշտ է օժտված լինել խորը մանկավարժափոքրամակամ ունակություններով: Հենց այդպիսի տվյալներով էլ օժտված է Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար Մարինե Մեժլումյանը:

Ծնվել է 1969թ. Ասկերանի շրջանի Փոքրամալ գյուղում, սովորել Նախիջևանիկի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելով 1986 թվականին՝ նույն տարում էլ ընդունվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը: Դպրոցում իր գիտելիքներով, կազմակերպչականությամբ, սպորտային ունակություններով և համեստությամբ աչքի ընկնող աշակերտուհին նույնքան հաջողությամբ էլ սովորեց և ավարտեց ինստիտուտը ու նույն տարում էլ՝ 1990 թվականին, աշխատանքի ընդունվեց Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

Լինելով սիրված ուսուցչուհի՝ Մարինե Մեժլումյանը նաև հոգատար մայր է, ամուսին ու հրաշալի տատիկ: Նա իր գեղեցիկ ընտանիքի համար հպարտություն է, բերկրանք և ուրախություն: Ընտանիքն ու դպրոցը համատեղելով՝ նա պատվով է կատարում իր առաքելությունը մատաղ սերնդի հանդեպ:

Մարինե Մեժլումյանի աշակերտները գտնվում են մայրական ջերմ հոգատարությամբ և անսահման բարի հրեշտակներով լեցուն մոլորակում: Նրանց յուրաքանչյուր դասաժամ պարուրված է գունեղ պատկերներով և հեքիաթների թվում հերոսներով: Կոլեկտիվի անդամները նրան ճանաչում են որպես շնորհաշատ, կազմակերպված և խոնարհ անձնավորություն, որն ունի մարդկային բոլոր վեհ հատկանիշները:

Մարինե Մեժլումյանը անչափ երջանիկ մարդ է, քանի որ իրեն լիովին նվիրել է հայ մանկանը հայեցի ոգով կրթելուն և դաստիարակելուն, որը նրա մոտ շատ լավ է ստացվում: Դասավարի աշխատանքը նրան մեծ բավականություն է տալիս, որովհետև ուրիշների համար ապրելը ոչ միայն պարտքի, այլև երջանկության թելադրանք է, իսկ երջանկությունը երբեք տխուր կամ ուրախ չի լինում: Այն պարզապես երջանկություն է, մարդկային երջանկություն:

Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի ողջ կոլեկտիվը շնորհավորում է դասվար Մարինե Մեժլումյանին հորելյանի առթիվ և ցանկանում առողջություն, երջանկություն, հաջողություններ աշխատանքում և ընտանիքում:

Որքան ճանապարհներ է ընտրում ու որքան փաստարկներ գտնում սիրտը, որպեսզի հասնի նրան, ինչին նա ձգտում է:

Թող ի կատար ավելն Ձեր բոլոր երազանքները, մեր սիրելի գործընկեր տիկին Մեժլումյան:

Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՆՆԱՆ ՀԱՆՂԵՍ

Տարվա ամենագունագեղ եղանակը թերևս այնպես չի ուրախացնում մեծերին, ինչպես մանուկներին և հագեցած դարձնում նրանց առօրյան: Բերք ու բարիքով առատ՝ այն լավագույնս է ներկայացնում արցախցու արարման արդյունքը: Իսկ եթե կարողանում են դա ներկայացնել բնաշխարհին հատուկ երանգապնակով, վերածվում է տոնի: Արցախ աշխարհում անպակաս են դարձել տոները. ժենգալով հացի, մեղրի, նռան... և այդ բոլորի հանրագումար՝ Բերքի տոն:

Մանուկներն էլ իրենց «փառատոնն» ունեն, որ անվանում են Աշնան հանդես: Յուրաքանչյուր մանկական հիմնարկ յուրովի է ներկայացնում այն: Ստեփանակերտի «Մանուկների մոլորակ» մանկապարտեզում (տնօրեն՝ Ս. Ավշարյան) այն անցկացվեց բնական պայմաններում՝ առանձնատներից մեկի բակում, որը ձևավորված է ազգային ոճով. ունի թոնրատուն, հացատուն, համապատասխան կահ-կարասի:

Այան դիմավորում և օրհնում է այս խոսքերով.

Օ՜եր տղաները միշտ պեց ինի,



Տաշտերը լիզը հաց ինի, Չարը բլինի, պարին կյա, Պարի մարդը պարավ կյա:

Մանկապարտեզի սանը Արցախ այցելած հյուրին, որը Մայր Հայաստանից եկած լրագրող է, հերթով ծանոթացնում է արցախյան շուկային, հետն էլ՝ թե որ մթերքից ինչ կերակրատեսակ ինչպես են պատրաստում, որից ամենազխաժողովները՝ թոնրահացը, ժենգալով հացը, կուրկուտը, թերթերուկը և այլ ուտեստներ, հենց տեղում էին պատրաստվել: Այս ամենն ուղեկցվում էր ազգային երգ-պարով, խաղիկներով, հումորով: «Սա ազգագրական բաց թանգարան է», - նկատեց հրավիրված հյուրերից մեկը: Ազգային այդ մթնոլորտը դրական լիցքեր առաջացրեց բոլորի մոտ: Ներկաներն այն կարծիքը հայտնեցին, որ այդ ամենին ակնհայտես երեխայի հոգում այն խոր նստվածք կտա. նաև այդպես է սկսվում ազգային արժեքներին ծանոթությունն ու պահպանումը: «Ճանաչիր և պահպանիր», - կարծես այս էր միջոցառման կարգախոսն ու նպատակը:

Ս. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՂԵՊԻ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ամեն անգամ հերթական ուղևորությանը ղեպի մայր Հայաստան սպասում ենք մեծ ոգևորությամբ, ասես առաջին անգամ ենք վայելում հարազատ ու սիրելի տեսարանները: Մայր Հայաստանը, քաղաքամայր Երևանը և ճերմակափառ Մասիսը ասես հեռվից սպասում և կանչում են մեզ կարոտագին հայացքով: Նորից մտքով տեղափոխվում են 1988թ. և մտքով վանկարկում՝ «միացում» ու նորից զգում նրա նշանակությունն ու դերը: Այո, միացել ենք ոչ միայն ճանապարհով՝ Քարվաճառով, Քաշաթաղով, այլև հողով, մտքով, ցանկություններով և պայքարով:



Ազատագրված Քարվաճառով անցնող ճանապարհը կարծես ուխտի ճանապարհ էր, ապաշխարության և աղոթքի ճանապարհ: Կարող ես կարգի բերել մտքերդ, հիշել ապրած օրերդ, խոստովանել մեղքերդ Աստծուն և, իհարկե, ապագայի պլաններ մշակել: Հենց այդ մտքերով էլ առաջինը կանգ առանք արևի առաջին ճաճանչներով ողողված, բոլորիս համար շատ սիրված սրբավայրում՝ Դաղիվանքում:

Մի պահ օրը լցվեց հիացմունքով և գեղեցկությամբ: Պատմական այս սրբավայրն ասես մեր հավատքի խոստում վկան լինեք: Մեր հայրերն այն կերտել են մեր հավատքը հաստատելու և Աստծո գործությանն ու կարողությանը աներկբա վստահելով: Դաղիվանքում աղոթքը, ծայնդ ու երգը այնքան մոտ են թվում Աստծուն, որ թվում է՝ երկխոսություն է, և խնդրանքը կատարվի անմիջապես: Աստծո աչքն ու ականջը Դաղիվանքում են:

Սրբացած հողի Սուրբ վանքում աղոթելուց չհագեցած, բայց զորացած, շարունակում ենք մեր ճանապարհը Աստծո հովանու ներքո: Ամեն քար, մատուռ, խաչքար հիշեցնում է հայ մարդու հավատը, աշխատասիրությունը, տաղանդը, խելքն ու շնորհքը: Վաղնջական ժամանակներից երկրի երեսին գոյատևող մեր ազգը միշտ ունեցել է իր գիրը, գրականությունը, մշակույթը: Ամբողջ աշխարհին հայտնի Աստծո ընտրյալ ազգն ենք, և դրա վառ ապացույցն էլ հենց մենք ենք, մեր գոյությունը հզոր պետությունների

կողքին: Աշխարհին հայտնի եզակի մնայուն ապացույցներից մեկն էլ Մատենադարանն է՝ իր գույներով, մատյաններով, ինչպես նաև մատենագիրների անմեղ շնչով և իմաստությամբ, դարձանող տաղերով և հավերժական որդան կարմիրով: Մատենադարանում քեզ զգում են մի փոքր



րիկ մասնիկ մեծերի կողքին: Անգամ չես համարձակվում խորանալ այս սկա շինության և նրա արժեքների մեջ՝ մտածելով, որ չես տեղավորվի ոչ ժամանակի, ոչ մտքի, ոչ էլ իմաստի մեջ: Բայց հպարտությամբ գոտեպնդված՝ շարունակում են ճանապարհը՝ մտքում աղաղակելով. «Այո, իրավունք ունենք, որովհետև շատ արժանիքներով ազգ ենք, և գերագույն արժանիքը մեր երակներում է, մեր բնավորության գիծը՝ հայրենասիրությունը»: Քայլ առ քայլ պայքարի շունչը,

ոգին հետևում են մեզ, ծնված ենք պայքարի համար: Պայքարը մեր կոչումն է:

Հերթական վայրը Սարգարապատն է: Խոսքերն ավելորդ են: Մտքով անցնում է Սարգարապատի, Շուշիի, Արցախի մարտական զուգահեռականը: Միշտ նույն պատմությունը. թշնամու տարբեր խմբեր՝ թուրք, արաբ, պարսիկ, իսկ հայը անփոփոխ՝ Հայկ, Տիգրան, Վարդան, Անդրանիկ, Մոմթե, Ռոբերտ Աբաջյան... Այս թանգարանը բաց երկնքի տակ հողեղեն հայի բազկի ուժի ապացույցն է: Տեր Աստված, թող միշտ դողանջն խաղաղաբեր զանգեր, հնչեն հարսանեկան երգեր, և լավեն հաղթական քայլերգեր, իսկ Երևանի Հանրապետության հրապարակը միշտ թնդա տոնական երգով ու պարով:

Հայի աչքերի համար աշխարհի ամենագեղեցիկ քաղաքում՝ Երևանում քեզ լիարժեք հայ ես զգում, վայելում հարազատ տան սերն ու ջերմությունը:

«Երևան, Երևան, իմ միակ, անմահ...»: Երևանը ինքն էլ մի սրբավայր է, բայց իրեն շրջապատել է սրբավայրերով, որ մշտական աղոթքով անասան մնա:

Պատմական Նորավանքը մեր վերջին կանգառն էր, որի կողքով անտարբեր անցնել չես կարող: Վանական համալիրի յուրահատուկ ուժը, անկրկնելի բնությունը նոր հուզմունք ու զգացմունքներ են տալիս քեզ:

Կա՛ր Արցախը, կա՛ Հայաստանը, հայ ժողովուրդը, և կլինենք միշտ, քանի դեռ մեր ժողովուրդը աղոթում է, հավատում է, արարում է:

Ուզում են մեր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնել Շոշի Ս. Աբրահամյանին մեր մտահոգացումը իրականացնելու, մեզ աջակցելու և մեզ արդյունավետ ու նպատակային միջոցառում կազմակերպելու համար:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջև. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ՀԱՅՆ ՍՈՒՐԲ Է

Մարտունու հ.1 պետական մանկապարտեզի «Մանուշակ» խմբի դաստիարակ Նարինե Գրիգորյանը կազմակերպել է գեղեցիկ ու դաստիարակչական միջոցառում: Թեման հացն էր: Գեղեցիկ ու թեմային համահունչ կահավորված դահլիճ, ավանդական լավաշի խմոր, այլուր, գրտնակ, ցորենի ոսկեգօծ հասկեր, ջերմ ու տրամադրող մթնոլորտ, սանիկների խորհրդանշական հագուստներ. այս ամենը հուշում էին, որ միջոցառումը լինելու է բովանդակալից ու հետաքրքիր:

Հայաստանը հացի հնագույն հայրենիքներից է: Հայկական լեռնաշխարհում հաց թխել են դեռևս



Քրիստոսի ծննդից առաջ 3-2-րդ հազարամյակներում: Այդ են վկայում մի շարք հնավայրերի պեղումներից հայտնաբերված աղոռիքներն ու թոնիրները: Միջնադարյան Հայաստանում տարածված էին բոբոնը, մատնաքաշը, բաղաթը և, իհարկե, մեր նշանավոր լավաշը: Այն ամենադիմացկուն եւ ամենաերկարակյաց հացն է աշխարհում: Հայկական հին գրույցը պատմում է, որ հացը չի կարելի հակառակ երեսի վրա դնել, չի կարելի հացը գետնին զցել կամ գետնի վրա թողնել: Ըստ ավանդապատմի՝ հենց մի փշուր հաց է ընկնում գետնին, այդ ժամանակ մարդկանց համար անտեսանելի մի հրեշտակ է իջնում երկնքից եւ մի ոտքով կանգնում այդ հացի փշուրի վրա, որպեսզի այն ոտնատակ չընկնի: Այնպես որ, մարդիկ պետք է անմիջապես գետնից վերցնեն ընկած հացը և բարձր տեղ դնեն: Հացը գետնին զցելը մեղք է, քանի որ այն թոնիր է մտել, մաքրվել կրակի բոցերի մեջ ու սրբացել: Դարեր շարունակ մարդը միավորել է իրար աշխատանքը և երգը. հացի երգը բարձրագույնն է բոլոր երգերի մեջ:


Միջոցառման մեկնարկը տրվեց Տերունական աղոթքով: Այնուհետև երեխաները բանաստեղծություններ արտասանեցին՝ ծոնված հացին, փոքրիկ բեմադրությամբ ներկայացրին, թե ինչպես է պատրաստվում հացը՝ հատիկից սկսած մինչև սեղանի լավաշը:

Սուրբ հացի մասին իրենց հարուստ ու ճշգրիտ գիտելիքներով մեր փոքրիկ իշխանիկները գերեցին ու հմայեցին ներկաներին, երգեցին, պարեցին և փառք տվեցին հացն արարողին:

Հետաքրքիր և ուսուցողական էր միջոցառումը: Ն.Գրիգորյանը նշեց, որ այսուհետ նախադպրոցականներն ավելի կգնահատեն հացի արժեքը, ինչպես նաև կտիրապետեն հացի մասին ավանդազորյաներին: Հայի համար հացը եղել է ոչ միայն նյութական բարիք, այլև հոգեւոր սնունդ:

Ա. ԱՍՐԻԲԱԲՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՊԻԿ



Գործն է անմահ, լավ իմացեք, Որ խոսվում է դարեդար, Երենկ նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար...

Ռոմի. Թունանյան

Թերևս հարկ էր հիշելու ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն խոսքերը, քանզի մարդուց շատ բան չի պահանջվում իր բովանդակ կյանքում, քան մարդ լինելն ու մարդ մնալը: Այդպիսի համոզմունք ուներ մի մարդ, որին բոլորը ծանաչում էին իր եզակի հանդիպող անվամբ, եզակի պահվածքով ու արարքներով:

Սավաղ Հակոբի Գաբրիելյանը դարձել է ժողովրդական մարդ: Նա չէր առանձնանում կամ փայլում բարձրագույն կրթությամբ, արհեստներով ու տաղանդներով, սակայն փայլում էր ամենա-

կարևոր՝ «Մարդ» մասնագիտության մեջ:

Նա ծնվել է 1953թ. հուլիսի 5-ին Ասկերանի Դիլիժբաղ գյուղում, հասարակ ռամիկի ընտանիքում: Տան հոգսերի մեծագույն բեռը հենց նրա ուսերին էր, ինչը ստիպում էր նրան ավելի պատասխանատու և հասուն լինել իր գործելաոճում: Խորհրդային բանակում ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք, շարունակել ստեղծել ու արարել հայրենի բնօրրանում: Ամուսնացել է, ունեցել երեք արու զավակ: Հայտար էր իր հաջողություններով և առաջին հերթին՝ որդիներով ու թոռներով: Սավաղն աշխատել է տարբեր հիմնարկ-ծեռնարկություններում՝ որպես հասարակ վարորդ, իսկ երբ պայթեց Արցախյան շարժումը, նա վարորդի իր առաքելությունը շարունակեց շարժման ակտիվիստներ Իգոր Մուրադյանի, Երջանկահիշատակ Կոմիտաս Դանիելյանի և այլոց հետ՝ կազմակերպելով գաղտնի ստորագրություններ, ընդհատակյա հավաքներ: Պատերազմական իրավիճակներում թե՛ մարտերի ժամանակ Սավաղը «ՈւԱԶ» մակնիշի մեքենայով մարտի դաշտից հանում էր վիրավոր ու զոհված մարտիկներին: Վարորդ լինելը նրան մեծ

բավականություն էր պատճառում, հպարտանում էր, երբ կարողանում էր ծառայել մարդկանց: Զարմանում ես՝ ինչպե՛ս կարելի է անընդհատ գոհանալ մի գործից, որ նշանակում է ծառայել... Նա տիրապետում էր Մարդ լինելու արվեստին, ինչը կյանքում մարդու կողմից ստացած ամենամեծ կոչումն ու մասնագիտությունն է: Սովորական վարորդի կարգավիճակից բացի նա մարդկանց հետ ապրում էր նրանց հույզերով. հարկ է նշել հատկապես այն, որ երբ դպրոցականներին մրցումների էր տանում հանրապետությունից դուրս, ինքն ավելի մեծ ուրախություն էր ապրում, երբ թիմը հաղթանակած տուն էր բերում: Միտում էր բարին գործել, բարին արարել: Միշտ ժպտաղետ էր, թեկուզ սրտում թախիծ ուներ: Որդու վաղաժամ կորուստը խոր հետք էր թողել նրա՝ թվում էր, թե ուրախ սրտում: Միշտ հասարակ՝ առատածեռն, անշահախնդիր, կյանք սիրող ու գնահատող:

Ուղղակի ապշում ես՝ ինչպե՛ս կարող էր մարդն իր հասարակ կեցվածքով, սովորական աշխատավոր լինելով հանդերձ, այդքան սիրված ու ճանաչված լինել հանրության կողմից: Պատմության դասերից մեզ հայտնի են

շատ հերոսներ, ովքեր մարտի դաշտում են հերոսացել իրենց սխրանքներով, իսկ մեր պապիկը հերոսացավ հասարակական դաշտում՝ մարդկային պարզ ու շիտակ պահվածքով: Նա ապրեց այնպես, որ հողը չզգա իր ծանրությունը, նույնիսկ քայլում էր թեթև, այնպես, ինչպես բնավորությունը: Առանձնանում էր միայն առաքինություններով. չունեցր մարդկային տեսակին հատուկ մոլություններ: Գրիչս չի ուզում կանգնել, շարունակ գրել է ուզում մեր՝ ժողովրդական սեր վայելած պապիկի լավ արարքների մասին: Բառերը թիչ են, որ բնութագրեն, թվերը թիչ են, որ չափեն նրա արարքների մեծությունը՝ թե՛ ընտանիքի և թե՛ մարդկանց հանդեպ գործած: Ուղղակի ամենապարզ ու հասարակ կեցվածքով գերել էր բոլորին և անհավատալի է, որ նա արդեն մեզ հետ չէ, այլ մեր սրտերում:

Միտելի պապիկի վառ հիշատակը միշտ բարձր է պահվելու հարազատների ու մտերիմների կողմից, նրան հիշելու ենք նույն ժպտով, ինչպիսին որ ինքն էր մարդկանց պարզաբան: Ժողովրդի կողմից հանրաճանաչ «վարորդ պապիկը» մնաց կենդանի հուշ:

Լուսինե ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԵՏԱԳԻԾ

ՈՒՍՈՒՅԶԻՍ

Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենատուրգողական առարկան, ամենակենդանի օրինակն աշակերտի համար հենց ինքը ուսուցիչն է:

ԱղոյՖ Դիստերվեզ



Հենց այդպիսի կենդանի օրինակ է եղել ինձ համար իմ առաջին ուսուցչուհին՝ ընկեր Շահնազ արյանը: Նրա մասին այսօր ուզում եմ երկար խոսել, թե

ինչպես իսկապես մայրական սիրով ու զգվանքով էր նա սիրում իր սաներին՝ մեզ, ինչպես էր ոչ միայն իր մտքի թռիչքներին մեզ մասնակից դարձնում, այլև իր զգվանքն ու ջերմությունն էր տալիս: Սովորեցնում, սիրում, դաստիարակում, ուրախանում յուրաքանչյուրիս հետ, յուրաքանչյուրիս հաջողություններով, հուզվում մեզ հետ՝ միևնույն ժամանակ հուսադրելով և խորհուրդներ տալով: Նա միայն առաջին ուսուցչուհի չէ, նա մեր կյանքի այն ուղեցույցն է, որից սկսվեց մեր ճանապարհը:

Իմ ուսուցչուհի՛, այսօր երախտագիտու-

թյան խոսք եմ ուզում ասել նախ և առաջ, քանի որ առաջին հերթին Ձեզ եմ պարտական այն ամենի համար, ինչին հասել եմ.

Վեց տարեկան բոլորած, ճանփաներով ծանոթ, Մորս ձեռքից պինդ բռնած, Դպրոց մտա ամաչկոտ: Դու ժպտացիր մտերմիկ, Հարազատի ջերմ սիրով, Դպրոցի բակը փոքրիկ Դարձավ մեծ ու լուսավոր: Ուրախ էի, ժպտերես, Բախտավոր ու երջանիկ, Գտել էի մորս պես Հարազատ ու բարի սիրտ: Ցույց տվեցիր անհատնում Ապարանքը գանձերի, Որ հունձ դառնան իմ հոգում Սուրբ գանձերը գրքերի:

Շնորհակալ եմ Այբ, Բեն, Գիմ...-ից՝ ինձ թևեր տալու և կյանքում բարձր թռիչքներ մաղթելու համար, մարդկային բարոյական արժեքներ սերմանելու և կյանքի թողուրտուն չմոլորվելու գաղտնիքներ բացահայտելու համար:

Շնորհակալ եմ, որ այսօր ինքս մի ուսուցիչ եմ, որ հնարավորություն ունեմ ուսուցչի սուրբ և պարտավորեցնող գործը կատարել:

Շնորհակալ եմ ամեն-ամենի համար որ տվել եք ինձ...

Այսօր դուք հեռանում եք դպրոցից՝ վաստակած հանգստի անցնելու կապակցությամբ, բայց ոչ Ձեր աշակերտներից, Ձեր կո-

լեկտիվից: Մենք մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և արցախյան երկարակեցություն: Լինեք միշտ այդքան բարի ու եռանդուն, ջերմությամբ ու սիրով, հարգանքով շրջապատված: Թող Աստուծո գործությունը Ձեզնից անպակաս լինի: Արցախ աշխարհում խաղաղությունը միայն թևածի, որպեսզի Ձեր սուրբ գործը կարողանանք միշտ շարունակել, կրթել ու դաստիարակել նորանոր սերունդներ: Իմ առաջին ուսուցչուհի սիրելի՛ ընկեր Շահնազարյան: Ձեր մայրական խրատները միշտ ուղեկից են եղել ինձ կյանքում, որոնցով միշտ առաջնորդվել եմ, որովհետև՝

Եղար բարի, իմաստուն, Խորհրդատու իմ կյանքի, Միշտ կմնաս իմ սրտում Որպես կարոտ մի անգին...

Սուսի Հայկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի, դասվար ընկեր Շահնազարյանի՝ վաստակած հանգստի անցնելու առթիվ դպրոցում տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում: Ասումնքով և երաժշտական գեղեցիկ կատարումներով հանդես եկան նրա դասվարական՝ 5-րդ և 9-րդ դասարանների աշակերտները: Երախտագիտության և հարգանքի խոսքով մեծաբեղիկ իրենց առաջին ուսուցչուհուն: Մաղթեցին քաջառողջություն, երկարակեցություն, ստեղծագործական աշխատանքի շարունակություն:

Իսկ նրա սանուհի՝ 9-րդ դասարանի աշակերտուհի Ե. Աբրահամյանը, որն ունի ստեղծագործական ձիրք, սեփական տողեր ծոնեց

սիրելի ուսուցչուհուն.

Բացել եք մեր առջև մտքի գանձարան, Տվել եք մեզ բանալին իմաստության, Սովորեցրել եք կարդալ, գրել, Մեծին հարգել, փոքրին սիրել: Եվ Ձեր փափուկ, մուրթ ձեռքերում Քանի՛ մատղաշ ծիլ է ծաղկել, Քանի՛ սերունդ եք կյանք ճանապարհել Ու նրանց ճանփին վառել պայծառ Հոգու լույսեր անհամար: Մեր սիրելի ուսուցչուհի, Դուք այսօր հեռանում եք դպրոցից, Հեռանում եք այն մեծ տնից, Ուր երկա՜ր-երկար տարիներ Մանուկներ եք կրթել, դաստիարակել: Թողեք, որ հիմա ես թաց աչքերով Ու բարի սրտով Ձեզ բարին մաղթեմ.

- Եղե՛ք միշտ առողջ, ուրախ, ժպտերես, Կյանքում Դուք երբեք վատը չտեսնեք, Աստված լինի Ձեզ պահապան, Մեր սիրելի ընկեր Շահնազարյան:

Սուսի միջնակարգ դպրոցի կուլեկտիվը միացավ աշակերտների արտահայտած բարեմաղթանքներին, նույնպես ցանկացավ բարօրություն, ընտանեկան ջերմություն և խաղաղություն:

Սուսի միջնակարգ դպրոցի կուլեկտիվի անունից՝ Հրանուշ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ընկեր Շահնազարյանի նախկին սանուհի, այժմ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

Մարզական

ՈԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՆՐԱՍՏԱՐՏԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԱՅ ԿԳՍ և Պաշտպանության նախարարությունների պլանով հոկտեմբերի 9-10-ը անցկացվեցին ռազմականացված հնգամարտի հանրապետական մրցումներ 8-րդ-9-րդ դասարանների պատանիների միջև: Մասնակցեցին մայրաքաղաքի և բոլոր շրջանների հավաքականները: Մրցումներն անցկացվեցին ռազմականացված կրոսավազք (ներառում է 1700 մ վազք, ձգումներ պտտածողի վրա, լաբիրինթոսի անցում հակազգով, հրաձգություն, ԿԱ քանդում-հավաքում, 20 կգ-ոց փամփուշտի արկղի տեղափոխում), նոնակի նետում հեռավորության վրա, վազք 1000 մ և 100 մ, վերելք ուժով մրցաձևերից: Մրցումների գլխավոր դեկավար՝ ԱՅ ԿԳՍՆ ՌՀ ՖԴ և արտադպրոցական բաժնի վարիչ Ստեփան Օհանջանյանի՝ մարզիչ-

Առաջին օրը մրցումներն անցան Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ռազմավարժանքների հրապարակում՝ կրոսավազք և նոնակի նետում հեռավորության վրա մրցաձևերից, մյուս երեքից հաջորդ օրը՝ հանրա-

փանակերտի թիմին: Բոլոր հինգ մրցաձևերի արդյունքների հանրագումարով անհատական հաշվարկով 1-ին տեղը գրավեց Արմեն Օհանյանը (Մարտունու հ. 2 հ/դ), Միքայել Արզումանյանը (Հաղորթի շրջանի Տունու մ/դ), 3-րդ տեղը՝ Հայկ Աթայանը (Ստեփ. հ. 10 հ/դ):

Որոշվեցին նաև 5 մրցաձևերից հաղթողները: Վազք 100 մ մրցաձևում լավագույնն էր Արմեն Օհանյանը (Մարտունու հ. 2 հ/դ), 1000 մ վազքատարածությունում Վազքատարածությունում առաջինն էր Հայկ Աթայանը (Ստեփանակերտ), նոնակի նետում մրցաձևում՝ Շուշիի շրջանի Քարին տակի միջնակարգ դպրոցի աշակերտ Գոռ Վարդանյանը, վերելք ուժով մրցաձևում՝ Սոս Թաղևադյանը (Բերձորի հ. 2 մ/դ), ռազմականաց-



Վազքատարածությունում հաղթողները՝ Վալերի Գրիգորյանը (Ստեփ. հ. 2 հ/դ):

1-3-րդ տեղեր գրաված թիմերը և անհատական հաշվարկով մրցանակային տեղեր գրաված տղաները պարգևատրվեցին ԱՅ ԿԳՍՆ պատվոգրով, դրամական պարգևով և Պարգևատրումներ եղան նաև ՊՆ կողմից:

Խրախուսվեցին և թիմերի մարզիչ-ներկայացուցիչները: Լավագույն ճանաչված Արմեն Օհանյանն ասաց, որ հաջողության հասել է տքնաջան աշխատանքի արդյունքում: Ամեն օր մարզվում է, որպեսզի լինի ֆիզիկապես առողջ և հետագայում կարողանա առանց դժվարու-

թյունների անցնել բանակային ծառայությունը:

Իսկ Սոս Թաղևադյանն ասաց, որ հեշտ չէ հաղթանակի հասնել, դրա համար պետք է ունենալ կամքի ուժ, անընդհատ աշխատել քեզ վրա, որ կարևորը ֆիզիկական տվյալները չեն, այլ կամքի ուժը. «Պետք է կարողանաս քեզ կառավարել, քեզ ստիպես անել»: Պատանին 50:50-ով կողմնորոշվել է. կամ 9-րդը ավարտելուց հետո գնալու է Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան, կամ ավարտելու է միջնակարգը և ըն-



դունվի ֆիզկուլտիստիտուտ: Ղարիբ Ահարոնյանի ղեկավարած թիմը երկրորդ տարին է 1-ին տեղ գրավում: Թիմում ընդգրկված են Սուսի, Մարտունու հ. 2 և Գիշու դպրոցների պատանիները: Անշուշտ, թիմի կազմում շրջանային փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած պատանիներն են, բայց, ըստ մարզիչի, կարևոր է նաև նրանց հետ հոգեբանական աշխատանք տանել, նրանց հաղթանակի մղել:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



Ներին, թիմերին մրցումների կարգը բացատրելուց հետո սկսվեց մրցապայքարը:

պետական մարզադաշտում, որտեղ էլ տեղի ունեցավ պարզևատրման արարողությունը:

Թիմային հաշվարկով 1-ին տեղը գրավեց Մարտունու շրջանի հավաքականը, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին Ասկերանի և Ստեփանակերտի թիմերը: Հաղորթի թիմը Ստեփանակերտի հավասար միավորներ էր հավաքել, սակայն մրցումների կարգի համար ձայն՝ առավելությունը տրվեց ռազմականացված կրոսավազքից ավելի շատ միավորներ հավաքած Ստե-



Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 10.10.2019թ.:

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: